ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ԵԼԵՆԱ ՁԻԼԱՎՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՆՈՒՆԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՄԱՍ 1

ՄԱՅՐԵՆԻ 4

ՄԱՅՐԵՆԻ 4 ՄԱՍ 1

ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ԵԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՆՈՒՆԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ 4

Հանրակրթական դպրոցի դասագիրք

Մաս 1

Նկարիչ՝
Խորեն Հակոբյան



ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ–2025

ՀՏԴ 373.3:811.19(075.3)
ԳՄԴ 81.51g72
Մ 239

Մայրենի 4 /Մաս 1/ Վ. Սարգսյան և ուրիշներ;
Մ 239 Նկարիչ՝ Խ. Հակոբյան.- Եր.: Հեղ. հրատ., 2025.- 100 էջ:

ՀՏԴ 373.3:811.19(075.3)
ԳՄԴ 81.51g72

ISBN 978-9939-0-4801-7
© Սարգսյան Վաչագան Ա., 2025
© Խաչատրյան Հեղինե, 2025
© Ջիլավյան Ելենա, 2025
© Գրիգորյան Սուսաննա, 2025
© Գալստյան Քնարիկ, 2025
© Սարուխանյան Նունե, 2025

ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ



Այս դասին դու՝

- Կամրապնդես բարդ բառերի մասին գիտելիքներդ:
- Կիմանաս, որ բառերն էլ կարող են քեզ համար լինել տուն և տանիք:
- Կպարզես, թե ինչ է հայրենիքը քեզ համար:
- Կպատմես, թե ինչ ես անում դու հայրենիքի համար:

ԵՐԳ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ

Երվանդ Պետրոսյան

Դու երբևէ մտածե՞լ ես, որ բառերն էլ ունեն համ ու հոտ, հույս ու լույս:

Հայր եմ ասում,
Մայր եմ ասում,
Ասում եղբայր,
Ասում քույր,
Եվ բառերից
Լույս եմ առնում,
Հույս* եմ առնում,
Համ ու բույր*:

Հաց եմ ասում,
Ջուր եմ ասում,
Ասում եմ հող,
Հայրենիք,
Եվ բառերն այդ
Կարծես տուն են,
Տուն են կարծես
Ու տանիք:

Հարցեր

1. Ո՞ր բառերից է լույս ու հույս, համ ու բույր առնում բանաստեղծության հերոսը:
2. Ուրիշ ի՞նչ բառեր է կարևորում նա:
3. Հերոսի համար ի՞նչ է հայրենիքը:

Առաջադրանքներ

1 Լրացրո՛ւ անավարտ նախադասությունները:

Երբ կարդացի բանաստեղծության վերնագիրը, մտածեցի, որ _____:

Երբ կարդացի բանաստեղծությունը, հասկացա, որ _____:

2 Դու ի՞նչ լավ գործեր ես անում քո ընտանիքի, դպրոցի, բակի, համայնքի համար:

3

Ինչ է հայրենիքը քեզ համար: Հիշիր «Մայրենի 2»-ը:

4

Հայր, մաս, մայր, սեր, հաց, քաղաք, տուն, հող, քույր, եղբայր բառերով կազմիր բարդ բառեր և գրիր:

5

Շեփորից դուրս են եկել բառի մասերը:

Օգնիր երգ արմատին՝ գտնելու իր կորցրած մասերը և գրիր:

Օրինակ՝

զույգ + երգ = զուգերգ:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Քո արած լավ գործերն էլ կարող են համ ու բույր տալ ընտանիքիդ, ընկերներիդ, շրջապատի մարդկանց:

Այս դասին դու՝

- Կամրապնդես պարզ, բարդ և ածանցավոր բառերի մասին ունեցած գիտելիքներդ:
- Կիմանաս, թե հեքիաթի հերոսն ինչ է պահել գորգի տակ:
- Կբացահայտես, որ բոլորն էլ ինչ-որ բան կարող են թաքցնել գորգի տակ:
- Կպարզես, թե ինչպես էր փոքրիկ աղջիկն իրականացնում իր երազանքները:

ԳՈՐԳԻ ՏԱԿ

Դոնալդ Բիսեթ

Կարող ես պատկերացնել, որ ձին ու վագրը կարող են միասին ապրել գորգի տակ:



Լինում են, չեն լինում՝ մի վագր ու մի ձի են լինում: Նրանք մտերիմ ընկերներ են լինում: Ապրում են նկարչասենյակում՝ գորգի տակ:

Նրանք սիրով են ապրում նկարչասենյակում, քանի որ սիրում են նկարել:

Մերին՝ փոքրիկ աղջիկը, որն ապրում էր այդ տանը, մի անգամ հարցրեց նրանց.

– Ինչպե՞ս եք կարողանում գորգի տակ մտնել: Ինչպե՞ս եք դառնում այդպես հարթ*:

– Որովհետև մենք երևակայական* կենդանիներ ենք,– ասացին նրանք:

– Ես երևակայական վագր եմ:

– Իսկ ես երևակայական ձի եմ:

– Իսկ դու որտեղ ես պահում քո խոտը,- հարցրեց Մերին ձիուն:

– Գորգի տակ,– ասաց նա,– դա երևակայական խոտ է:

– Դու էլ ես քո ուտելու ոսկորները պահում այնտեղ,– հարցրեց Մերին վագրին:

– Այո՛,– ասաց նա և անհետացավ գորգի տակ:

Ձին հետևեց նրան, և Մերին մնաց մենակ:

Հետո նա վերցրեց իր ալբոմը, շաքարի կտորներ նկարեց ու դրեց գորգի տակ:

Շուտով աղջիկը գորգի տակից լսեց ձիու գոհ ձայնը: Ձին ուտում էր շաքարը:

Ապա Մերին թղթի փոքրիկ կտորի վրա գրեց. «Ի՞նչ են սիրում վագրերը» և դրեց գորգի տակ: Մի փոքր աղմուկից հետո ձին գլուխը հանեց գորգի տակից ու ասաց.

– Խոտով բրդուճ:

Մերին նայեց նրան.

– Դու չարաճճի* ձի ես: Խոտով բրդուճը* ձիերի սիրած ուտեստն է: Հիմա գնա՛ ու վագրի՛ն հարցրու, թե նա ինչ է սիրում:

- Որտեղ էին ապրում երևակայական կենդանիները:
- Աղջիկն ինչպե՞ս պարզեց, թե ինչ են սիրում վագրերը և ձիերը:
- Ինչո՞ւ Մերին ձիուն չարաճճի անվանեց:
- Քո կարծիքով՝ ի՞նչ կուզեր վագրը:

Ձին գնաց, ու հայտնվեց վագրը.

– Ես ուզում եմ ժամացույց ունենալ, որ կարողանամ ժամն ասել,– ասաց վագրը:

– Շատ լավ,– ասաց Մերին, նկարեց ժամացույց ու տվեց վագրին, հետո նկարեց խոտով բրդուճներ ու տվեց ձիուն: Ձին անհետացավ*:

Կարդա՛ նկարին համապատասխանող տողերը:

Շուտով երկուսն էլ դուրս եկան գորգի տակից:

– Շնորհակալությո՛ւն, Մերի՛,– ասացին ու համբուրեցին աղջկան:

– Այսօր ուրիշ ի՞նչ կցանկանաք,– հարցրեց Մերին:

– Միայն անձրևոց ենք ուզում,– ասացին երկուսն էլ:

– Անձրևո՞ց,– զարմացած հարցրեց Մերին,– բայց գորգի տակ անձրև չկա: Վա՛յ, մոռացել էի, դա երևակայական անձրև է:

– Իհա՛րկե,– ասացին ընկերները:

Մերին նկարեց անձրևոց և տվեց նրանց:

– Շնորհակալությո՛ւն և բարի՛ գիշեր,– ասացին նրանք:

– Բարի՛ գիշեր,– ասաց Մերին ու գնաց քնելու: Հետո մտածեց. «Նրանք ունեն գեղեցիկ նոր անձրևոց, բայց այնտեղ ոչ մի անձրև էլ չկա»: Ապա թղթի մեծ կտորի վրա անձրև նկարեց, գնաց նկարչասենյակ ու դրեց գորգի տակ:

Հաջորդ առավոտ, երբ Մերին մտավ նկարչասենյակ, սենյակը լցված էր ջրով, իսկ վագրն ու ձին նստած էին անձրևոցի* վրա, ինչպես նավակի մեջ:

«Անձրևը բավականին վարար է եղել»,– մտածեց Մերին:

Նախաճաշից հետո, երբ նա վերադարձավ նկարչասենյակ, մայրիկը մաքրում էր գորգը: Ո՛չ ջուր կար, ո՛չ անձրևոց, ո՛չ ձի, ո՛չ էլ վագր:

Նա նստեց նկարչասենյակի մոտ ու սկսեց նկարել ձի ու վագր՝ քնած վիճակում: Շուտով մայրիկը դուրս եկավ սենյակից: Նկարչասենյակում լռություն էր տիրում: Մերին մենակ էր: Շուտով նա ինչ-որ ձայներ լսեց գորգի տակից: Ձին ու վագրը խռմփացնում էին:

ԱԶՔԻ ԱՌԱՋ

անձրևոց
համբուրել
բրդուռ
չարաճճի
երևակայական

Հարցեր

1. Քո կարծիքով՝ վագրի ինչի՞ն էր պետք ժամացույցը:
2. Մերին էլ ի՞նչ նկարեց վագրի և ձիու համար:
3. Ի՞նչ պատահեց դրանից հետո:
4. Քո կարծիքով՝ ի՞նչն էր անսովոր այս պատմության մեջ:

Առաջադրանքներ

1 Նկարի՛ր այն երևակայական աշխարհը, որի մասին կուզես պատմել ընկերոջդ:

2 Գրի՛ր՝ ի՞նչ կցանկանայիր պահել գորգի տակ: Այդ մասին պատմի՛ր ընկերոջդ և լսի՛ր նրա տարբերակը:

3 Վանդակներում լրացրու այնպիսի՛ տառեր, որ տողերում կարդացվեն գոյականներ, իսկ ընդգծված սյուներում՝ **կարծր** ածականի հոմանիշներ:

	արա	
	զն	
	ուշա	
	աղան	

4 Տեքստից դո՛ւրս գիրք պարզ, բարդ, ածանցավոր երեքական բառ:

5 Տեքստը պատմի՛ որևէ հերոսի անունից:

Օրինակ:

Ես գորգի տակի Վագրն եմ: Հեղինակն ինձ շատ խելոք կենդանու տեղ է դրել: Գրել է նաև, թե ես իբր ապրում եմ գորգի տակ, այն էլ՝ ձիու հետ: Ախր ես ձիու միս շատ եմ սիրում, հաճույքով կուտեի գորգի տակի Ձիուն: Բայց, ավա՜ղ, ես էլ եմ նկար, նա էլ: Ինձ թվում է՝ Մերին է մեզ այդպիսի համերաշխ կյանք տվել: Կարծում եմ՝ նա շատ բարի աղջիկ է: Ձիուն խոտով բրդուճներ է տալիս, ինձ էլ՝ ինչ ուզեմ:



Հիմա չգիտեմ, եթե մի օր նկարի միջից դուրս գամ ու դառնամ իսկական վագր, ի՞նչ կանեմ, եթե հանդիպեմ նկարի միջից դուրս եկած իսկական ձիուն:

Մի խորհո՛ւրդ տվեք, սիրելի՛ երեխաներ:

6 Գրի՛ր, թե ինչ ցանկություններ ունես և ինչ ես անում դրանք իրականացնելու համար:

Օրինակ: Ուզում եմ սովորել համեղ կերակուր պատրաստել, այդ պատճառով էլ կարդում եմ տատիկիս խոհարարական տետրը:

7 Վերականգնի՛ր քանդված նախադասությունը:

Երազի՛ր, ձեռքերդ մի՛ նստիր: բայց ծալած

8 ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

Հարցեր	Պատասխաններ
	Որովհետև մենք երևակայական կենդանիներ ենք:
	Գորգի տակ:
	Միայն անձրևոց ենք ուզում:

Քննարկե՛ք գրված հարցերը խմբի ներսում և համեմատե՛ք մյուս խմբերի աշխատանքների հետ:

9

Ձիուն ու Վագրին բնութագրի՛ր տրված ածականներով.

մսակեր, սմբակավոր, խոտակեր, ընտանի, գիշատիչ, ճանկավոր:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ



Որ իրական դառնան իղձ ու երազանք,
Մենք պիտի ջանանք, ունենանք եռանդ:

Այս դասին դու՝

- Կամրապնդես նախադասության մասին ունեցած գիտելիքներդ:
- Կիմանաս, թե որն է անսպառ հարստությունը:
- Կպարզես, թե ինչ գրքեր են կարդացել ծնողներդ քո տարիքում:

ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Սիլվա Կապուտիկյան

Բազմած են շուրջս նրանք ամեն օր
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհքի,
Երգում են, պատմում ներդաշնակ ու խոր
Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի:
Ու էսպես՝ ինձ հետ, իմ տանն ամեն օր,
Ոչ հաց են ուզում ինձանից, ոչ շոր:

Հովհաննես Թումանյան

Թերթեր՝ դարսած իրար վրա,
Մի վերնագիր ու մի անուն.
Համեստ ու լուռ դրված է նա,
Դրված է նա պահարանում:

Եթե բացես, եթե կարդաս,
Նա քեզ կտա թևեր անտես,
Կհասցնի բարձունք անհաս*,
Նոր աշխարհներ կտանի քեզ:

Ուժ կլցնի նա քո հոգում,
Նա կօգնի քեզ դժվար ժամին,
Կսովորեցնի ապրել կյանքում,
Ապրել հպարտ, ապրել ազնիվ:

Երա՛զ, երգե՛ր, թովքե՛ր* գարնան,
Հույս ու ընկեր, կյանք ու գալիք*,
Հարստությունն այս անսահման
Մի պարզ բառով կոչվում է գի՛րք...

Հարցեր

ԱՉՔԻ ԱՌԱՋ

բարձրանք

1. Նկարագրի՛ր գիրքը՝ օգտագործելով բանաստեղծության բառերը:
2. Վերընթերցի՛ր երկրորդ քառատողը և բացատրի՛ր իմաստը:
3. Ինչո՞ւ է հեղինակը գիրքը համարում հարստություն:
4. Իսկ քեզ համար ի՞նչ է հարստությունը:

Առաջադրանքներ

1

Քեզ ի՞նչ է սովորեցրել գիրքը: Իսկ ընկերո՞ջդ: (Լսի՛ր նրան:)

2

Ավարտի՛ր նախադասությունը:
Գիրքը իմ լավ ընկերն է, որովհետև _____:

3

Վերականգնի՛ր քանդված առածը:

էլ | հարցրու: | գիտուն | անգետից

չիմացածդ | Ինչքան | լինես, | մի

4 Գիրք բառով կազմիր բարդ կամ ածանցավոր բառեր:

Օրինակ՝ գրքասեր, գրքային:_____

5 Ինչ իր է նա՝ համր ու մունջ,
Ծառայում է անշշունջ,
Խոսեցնում է, խոսք ասում,
Բայց մեզ երբեք չի լսում:

6 **ԲԱՌՔԱՄՈՑԻ**

Հարստություն բառի տառերով կազմեք նոր բառեր:
Այս բառից ստացվում են նաև դարձգրեր:
Օրինակ՝ թաս-սաթ
Գտեք ևս երկու դարձգիր:

7 Վերընթերցիր «Մուտքի պատուհանիկի» գրառումը և գրիր, թե ինչ հանճարներ են ապրում ձեր տանը:

8 Լուծիր նկարելուկները: Ստացված բարդ բառերը գործածիր նախադասությունների մեջ և գրիր:

դաս + =

խնդիր + =

+ =

+ =

9 Փոքրիկ հետազոտական աշխատանք

Պարզի՛ր և գրի՛ր, թե ինչ գրքեր են կարդացել ծնողներդ:

Հարց	Պատասխան	
	Հայրիկ	Մայրիկ
Ո՞րն է եղել քո տարիքում նրանց կարդացած ամենասիրելի գիրքը:		
Ո՞րն է եղել նրանց վերջին կարդացած գիրքը:		
Որտեղի՞ց էին նրանք ձեռք բերում գրքերը կարդալու համար:		
Ի՞նչ գիրք խորհուրդ տվեցին քեզ հիմա կարդալու համար:		

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Քո կարդացած գիրքը դառնում է քո լավ ընկերը:

Այս դասին դու՝

- Կտարբերակես նախադասությունները՝ ըստ հնչերանգների:
- Կհասկանաս, թե ինչու ճայը մնաց սևադեմ:
- Կպարզես, որ թռչուններն էլ կարող են խորհուրդներ տալ:
- Կկարևորես քո յուրահատուկ լինելը:

ՃԱՅԸ ԵՎ ՍԱԳԸ

Մխիթար Գոշ



Կարդա՛ և կիմանաս, թե ինչու սև թռչունը մնաց սև, սպիտակը՝ սպիտակ:

Ճայը* Սագին աղաչում էր և ասում.

– Ես սև եմ, և բոլորն ինձ արհամարհում* են: Խնդրում եմ ինձ սովորեցնես, որ քեզ պես սպիտակեմ:

– Շա՛տ լավ,– ասաց Սագը:– Ինձ պես միշտ լվացվի՛ր ջրով:

Ճայը լսեց Սագի խորհուրդը: Բայց լվացվելիս ընկնում էր նրա սև փետուրը և դարձյալ նույն գույնի մեկ ուրիշ փետուր էր գալիս:

Ճայը կրկին գնաց Սագի մոտ ու աղաչեց: Սագն ասաց նրան.

– Լվացվելու հետ մեկ-

տեղ պետք է իմ լեզուն էլ սովորես, որ կարողանաս ինձ նման լինել:

Բայց Ճայը չցանկացավ մոռանալ իր լեզուն և մնաց նույն սևադեմը*:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

արհամարհել
խորհուրդ
դարձյալ
սևադեմ

Հարցեր

1. Ինչն էր անհանգստացնում Ճային:
2. Ինչ խորհուրդ տվեց Սագը:
3. Ինչ պատահեց Ճային:
4. Ինչու՞ Ճայը չցանկացավ մոռանալ իր լեզուն:
5. Քո կարծիքով՝ ինչ կլինի, եթե բոլորն աշխարհում իրար նման լինեն:

Առաջադրանքներ

Կեռնեխ

Ագռավ

1

○ Ո՞ր խորհուրդն ընդունեց և կատարեց Ճայը:

✧ Ո՞ր խորհուրդը չցանկացավ կատարել Ճայը: Քո կարծիքով՝ ինչու՞:

☼ Ինչ խորհուրդ կտաս սևադեմ թռչուններին:

Ճայ

2 Օգտվելով տեքստից՝ ավարտի՛ր նախադասությունները:

Ես սև եմ, և բոլորն ինձ _____:

Լվացվելու հետ մեկտեղ պետք է իմ լեզուն էլ _____:

Բայց Ճայը չցանկացավ _____:

3 Արտագրի՛ր նախադասությունները՝ փակագծերում գրված բառերը դարձնելով բարդ բառեր:

(Սև, դեմք) ագռավը մի ընկույզ գտավ:
Ճայը հանդիպեց (սպիտակ, փետուր) Սագին:
(Կարմիր, կտուց) Սագը խորհրդատու էր աշխատում:

4 Նախադասություններն էլ են իրարից տարբեր լինում: Կարդա՛ տեքստը:

Երեխաները դասարանական միջոցառումից հետո հավաքվել էին դպրոցի բակում և աշխուժորեն զրուցում էին:

Նրանցից մեկն ասաց.

– Ինչո՞ւ էինք բոլորս այդքան հուզվել:

– Որովհետև շատ պատասխանատու պահ էր:

– Ինչ լավ է, որ մեր ելույթն այդքան հաջող ստացվեց:

– Որովհետև յուրաքանչյուրս կարողանում է տարբեր բաներ անել:

– Եկե՛ք հաջորդ անգամ էլ այսպես միասնական ու համերաշխ լինենք:

Այս տեքստի առաջին նախադասությունը դու կարդացիր պատմելու ձևով՝ հանդարտ և նույն տոնով: Դա **պատմողական** նախադասություն է:

Երկրորդ նախադասությունը հարցում է արտահայտում, նրա մեջ կա հարց: Այդպիսի նախադասությունները **հարցական** նախադասություններ են:

Չորրորդ նախադասությունը **հիացմունք է** արտահայ-

տում: **Հիացմունք, ցանկություն, ափսոսանք, զարմանք, վախ** արտահայտող նախադասությունները **բացականչական** նախադասություններ են:

Վերջին նախադասության մեջ կա **հրաման, կարգադրություն, խնդրանք:** Այդպիսի նախադասությունները **հրամայական** նախադասություններ են:

5 Վաղ, երեխաներ, գնալ, առավոտ, դպրոց բառերով կազմի՛ր մեկ պատմողական նախադասություն և գրի՛ր:

6 Առակը պատմի՛ր սագի կամ ճայի անունից:

Օրինակ:

Ես ճերմակ սագն եմ: Իմ ծնողներն էլ են ճերմակափետուր եղել, իմ ապուպապերն էլ: Իմ ձագուկներն էլ են ճերմակափետուր:

Մի անգամ ձագուկներիս հետ լող էինք տալիս լճակում, հանկարծ անտառից մեզ մոտ թռավ-եկավ մի սևափետուր, սևադեմ ճայ ու խնդրեց, որ իրեն սովորեցնեմ ճերմակ լինելու գաղտնիքը:

Մտածեցի, թե ճայի ինչին է պետք սպիտակադեմ դառնալը: Բայց ինչ գիտեի սպիտակադեմ դառնալու մասին, ասացի ճային: Ճայը մի երկու բան արեց. ուզեց սև փետուրները փոխել, դարձնել սպիտակ, լող տալ սովորել իր պստլիկ ճանկերով, բայց մնաց նույն սևադեմը:

Այդ ժամանակ նրան խորհուրդ

տվեցի, որ նա փոխի իր լեզուն, այսինքն՝ էլ ոչ թե ճայ մնա, այլ դառնա ինձ նման սագ: Սակայն ճայը չուզեց փոխել իր լեզուն, ուզեց մնալ ճայ: Եվ ճիշտ էլ արեց: Ես, թեև սագ եմ, բայց կարծում եմ, որ ամեն մի արարած պիտի նման լինի իր ապուպապերին, որ իր ձագուկներն էլ իրեն նման լինեն: Թե չէ շատ տխուր կլիներ, եթե աշխարհում միայն սագեր լինեին կամ էլ միայն ճայեր:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Մեզ բնութագրող կարևոր բաներ կան, որոնք պետք է գնահատենք ու պահպանենք:

Ավելի դյուրին ապրելու համար
Մի՛ զոհաբերիր էությունը քո,
Պայքարի՛ր սիրով և եղի՛ր համառ,
Ուրիշի հանդեպ եղի՛ր համբերող:

Այս դասին դու՝

- Կկազմես հարցական նախադասություններ:
- Կանցնես լեռնային գետակի անցած ճանապարհով:
- Կզարմանաս նրա կատարած գործերով:
- Կպատմես քո կատարած օգտակար գործերի մասին:

ԳԵՏԸ

Համո Սահյան

Կարդա՛ և կիմանաս, թե ինչպես է փոքրիկ գետակը մեծ նավեր պահում իր կրծքի վրա:

Գետը լեռներից շառաչով* գալիս
Եվ անց է կենում դաշտերի միջով,
Կանչում-կարկաչում*, հորձանք* է տալիս,
Ափերն է զուգում զմրուխտ* կանաչով:

Պաղ ջուր է տալիս մարդուն ու բույսին
Եվ կաթիլն անգամ զուր չի կորցնում,
Կյանքի է կոչում կայաններ լույսի
Եվ ինքն իր ճամփին լույս տալով գնում...

Այսպես վաստակած նա ծով է մտնում,
Եվ ծովն է վերջին կայանը* նրա,
Բայց ծովի մեջ էլ հանգիստ չի գտնում,
Նավեր է պահում իր կրծքի վրա:

Դու էլ գետի պես անցի՛ր քո ճամփան,
Եվ նման՛ եղիր գետի հորձանքին,
Որ կյանքիդ վերջին կայանում անգամ
Ինչ-որ մի բանով պետք լինես կյանքին:

Հարցեր

1. Ի՞նչ ճանապարհ է անցնում լեռնային գետը:
2. Ի՞նչ օգտակար գործեր է անում գետը:
3. Ինչո՞ւ ծովի մեջ գետը հանգիստ չի մնում:
4. Ի՞նչ խորհուրդ է տալիս հեղինակը: Կարդա՛ համապատասխան քառատողը:

Առաջադրանքներ

1 Գետ բառով կազմի՛ր բարդ և ածանցավոր բառեր:

2 Ի՞նչ մայր է, որ իր ձագերի կաթով է սնվում:

3 **Փոխակերպում**

Գետից ստացի՛ր ծով:

Գետ – □ետ – կե□ – կ□ր – կո□ – ծով:

4 Օգտվելով բանաստեղծությունից՝ գրի՛ր 3 պատմողական նախադասություն գետի կատարած գործերի մասին:

5 Գրի՛ր քո կատարած օգտակար գործերի մասին:

6 • Կարդա՛ տեքստը:

ՇԱՔԱՐԱՋՈՒՐ ԳԵՏԱԿԸ (ավանդություն)

Մի հովիվ ունենում է Շուշան անունով մի աղջիկ, որի նմանը չկար աշխարհում: Նա որ ծիծաղում էր, սարերում շուշաններ էին բացվում, որ լաց էր լինում, արտասուքներն աղբյուրներ էին դառնում: Ասում են, թե այս գետակը Շուշանի արտասուքներից է գոյացել: Ջրի քաղցրահամ լինելու պատճառով գետակը կոչվել է Շաքարաջուր:

- Գրի՛ր, թե քանի պատմողական նախադասություն կա:
- Տեքստի վերաբերյալ առաջադրի՛ր երեք հարց:

Օրինակ: Ի՞նչ էր հովվի աղջկա անունը:
Դու կազմեցիր երեք հարցական նախադասություն:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Աշխարհում ամեն մեկն իր գործն է անում: Դու էլ քո՝ գործն արա:

Այս դասին դու՝

- Կամրապնդես բացականչական և հարցական նախադասությունների մասին գիտելիքներդ:
- Կծանոթանաս մի տղայի հետ, որն իր սեփական մոլորակն ունի:
- Կզարմանաս, որ, թեև տղայի մոլորակում օձ ու աղվես չկային, բայց նա վարժ խոսում էր նրանց լեզվով:
- Կհասկանաս, որ դու պատասխանատու ես քո մոլորակի՝ Երկրի համար:

ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆԸ

Անտուան դը Սենտ-Էքզյուպերի

Մարդիկ երազում են երկինք բարձրանալ և արդեն բարձրանում են: Բայց, պարզվում է, որ երկնքում էլ երազողներ կան, որ ուզում են Երկիր իջնել:

Երկրագնդի վրա ընկնելով՝ Փոքրիկ Իշխանը ոչ մի մարդ չտեսավ, և դա նրան շատ զարմացրեց: Նա նույնիսկ մտածեց, թե սխալմամբ թռել է մի ուրիշ մոլորակ*: Բայց հենց այդ ժամանակ ավազի վրա լուսնի ճառագայթի գույնի մի օղակ շարժվեց:

– Բարի՛ երեկո,– համենայն դեպս ասաց Փոքրիկ Իշխանը:

– Բարի՛ երեկո,– ասաց Օձը:

– Այս ի՞նչ մոլորակ եմ ընկել:

– Երկիրն է,– ասաց Օձը:

– Ա՜յ թե ինչ: Իսկ ի՞նչ է, Երկրի վրա մարդիկ չկա՞ն:

– Սա անապատ* է: Անապատներում ոչ ոք չի ապրում:

– Իսկ որտեղ են մարդիկ,– հարցրեց Փոքրիկ Իշխանը:– Անապատում, այնուամենայնիվ, մարդ մենակ է զգում իրեն:

Այնուհետև Փոքրիկ Իշխանը կտրեց-անցավ ամբողջ անապատը, բայց ոչ ոքի չհանդիպեց: Ամբողջ ճանապարհին նա միայն մի Ծաղիկ տեսավ՝ մի եռաթերթ, շատ փոքրիկ Ծաղիկ...

– Բարև՛,– ասաց նրան Փոքրիկ Իշխանը:

– Բարև՛,– պատասխանեց Ծաղիկը:

– Որտեղ են մարդիկ,– քաղաքավարի հարցրեց Փոքրիկ Իշխանը:

Ծաղիկը մի անգամ քարավան էր տեսել, որն անցել էր իր մոտով:

– Մարդի՞կ... Ախ, այո... Նրանք, կարծեմ, ընդամենը վեց կամ յոթ հոգի են: Ես նրանց տեսել եմ շատ տարիներ առաջ: Բայց թե որտեղ կարելի է նրանց հիմա գտնել, հայտնի չէ: Քամին նրանց քշում-տանում է: Նրանք արմատներ չունեն, և դա շատ մեծ անհարմարություն է:

– Մնաս բարո՛վ,– ասաց Փոքրիկ Իշխանը:

– Գնաս բարո՛վ,– ասաց Ծաղիկը:

Հենց այստեղ էլ հայտնվեց Աղվեսը:

– Բարև՛,– ասաց նա:

– Բարև՛,– քաղաքավարի պատասխանեց Փոքրիկ Իշխանը, բայց ոչ ոքի չտեսավ:

– Ես այստեղ եմ,– նորից լսվեց ձայնը:

– Դու ո՞վ ես,– հարցրեց Փոքրիկ Իշխանը:– Ինչքա՜ն սիրուն ես:

– Ես Աղվեսն եմ:

– Մի քիչ խաղա՛ ինձ հետ,– խնդրեց Փոքրիկ Իշխանը,- ես շատ տխուր եմ:

- Ի՞նչը զարմացրեց Փոքրիկ Իշխանին:
- Ի՞նչ տեսավ նա անապատում:
- Քո կարծիքով՝ Փոքրիկ Իշխանը կխաղա՞ Աղվեսի հետ:

– Ես քեզ հետ խաղալ չեմ կարող,– պատասխանեց Աղվեսը,– ես ընտելացած* չեմ:

– Ա՜խ, ների՛ր,– ասաց Փոքրիկ Իշխանը:

Հետո, մի փոքր մտածելով, հարցրեց.

– Իսկ ինչպե՞ս են ընտելացնում:

– Դու տեղացի չես երևում,– նկատեց Աղվեսը:– Ի՞նչ ես փնտրում այստեղ:

– Մարդկանց եմ փնտրում,– պատասխանեց Փոքրիկ Իշխանը:– Իսկ ինչպե՞ս են ընտելացնում:

– Մարդիկ հրացան ունեն և որսի են դուրս գալիս: Դա շատ անհարմար բան է: Հետո՝ նրանք հավ են պահում: Նրանց լավն էլ միայն դա է: Դու հա՞վ ես փնտրում:

– Ո՛չ,– ասաց Փոքրիկ Իշխանը:– Ես բարեկամ եմ փնտրում: Իսկ ինչպե՞ս են ընտելացնում:

– Տե՛ս: Դու ինձ համար առայժմ միայն մի փոքրիկ տղա ես, այնպես, ինչպես մյուս հարյուրհազարավոր տղաները: Եվ դու ինձ պետք չես: Ես էլ քեզ պետք չեմ: Ես քեզ համար ընդամենը մի սովորական աղվես եմ, այնպես, ինչպես մյուս հարյուրհազարավոր աղվեսները: Բայց եթե դու ինձ ընտելացնես, ապա ինձ համար ամբողջ աշխարհում միակը կդառնաս, ես էլ քեզ համար ամբողջ աշխարհում կդառնամ միակը...

– Սկսում եմ հասկանալ,– ասաց Փոքրիկ Իշխանը:– Իմ մոլորակի վրա մի վարդ կար, որը, երևի, ինձ ընտելացրել էր...

Աղվեսը շատ զարմացավ.

– Քո մոլորակի վրա՞...

– Այո՛:

– Իսկ քո մոլորակի վրա որսորդներ կա՞ն:

– Ո՛չ:

– Ի՜նչ հետաքրքիր է: Իսկ հավ կա՞:

– Ո՛չ:

– Աշխարհում կատարյալ* ոչինչ չի լինում,– հառաչեց աղվեսը: Եվ նրանք բաժանվեցին...

Հարցեր

1. Փոքրիկ Իշխանն ինչո՞ւ չխաղաց աղվեսի հետ:
2. Ի՞նչը զարմացրեց Աղվեսին:
3. Քո կարծիքով՝ ինչո՞ւ հառաչեց Աղվեսը, երբ բաժանվում էր Փոքրիկ Իշխանից:

Առաջադրանքներ

1 Ամեն էակ իր աչքերով է նայում աշխարհին: Հիշիր «Մայրենի 3» դասագրքից «Հեքիաթային դպրոցը» հեքիաթը:

Օգտվելով «Փոքրիկ Իշխանը» տեքստից՝ լրացրու անավարտ նախադասությունները:

Օձի աչքերով՝ անապատնեռում_____:

Ծաղկի աչքերով՝ մարդիկ ընդամենը _____:

Քամին մարդկանց քշում-տանում է, որովհետև_____:

Աղվեսի աչքերով՝ մարդիկ հավ են պահում, և _____:

2 Լրացրու՛ անավարտ նախադասությունները:

Աղվեսը ուրախ էր, որովհետև_____:

Աղվեսը տխուր էր, որովհետև _____:

3 Գրի՛ր, թե պատմության հերոսների հետ դու.

ո՞ր դեպքում ուրախացար_____,

ո՞ր դեպքում տխրեցիր_____:

4 Մեկը մեծացրու՛ հարյուր հազար անգամ: Տեքստում գտի՛ր այդ բառով բառակապակցություններ և գրի՛ր:

5 Տեքստից արտագրի՛ր երկուական բացականչական և հարցական նախադասություն:

6 Դերային ընթերցանությամբ ներկայացրեք Փոքրիկ Իշխանի հանդիպումներն Օձի, Ծաղկի և Աղվեսի հետ:

7 Եթե դու լինեիր Երկիր մոլորակի Փոքրիկ Իշխանը.

ի՞նչը կցանկանայիր պահպանել _____,
ի՞նչը կցանկանայիր փոփոխել _____,
ինչի՞ վրա կցանկանայիր, որ ուշադրություն դարձնեին մեծահասակները _____:

8 Ենթադրենք՝ Փոքրիկ Իշխանը հանդիպել է քեզ: Դու Երկիրն ինչպե՞ս կներկայացնես նրան:

9 Նախադասությունները դարձրո՛ւ բացականչական՝ համապատասխան բառի վրա դնելով բացականչական նշան:

– Սիրելի փոքրիկ, տուն արի:
– Անհոգ մնա, գալիս եմ:
– Ինչքան շատ ծաղիկներ կան պարտեզում:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես կարողացա_____
Ես զարմացա_____
Ինձ հետաքրքրեց_____

Մեծ երջանկություն է Երկիր մոլորակում ապրելը: Սիրենք, ու պատասխանատու լինենք նրա համար:

«ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս դասին դու՝

- Կվերհիշես թեմատիկ շարքի հերոսներին:
- Կամրապնդես քո սովորած բառերի գրությունը:
- Քեզ ծանոթ հերոսների հետ կհայտնվես Փոքրիկ Իշխանի մոլորակում:
- Կտարբերակես նախադասությունները՝ ըստ հնչերանգի:
- Ընկերներիդ հետ կստեղծես ձեր «Դասարանի դիմանկարը»:

1 Լրացրո՛ւ աղյուսակը:

Նախադասություններ	Ստեղծագործության անվանումը	Հերոսը
Ես սև եմ, և բոլորն ինձ արհամարհում են:		
Ինչպե՞ս եք կարողանում գորգի տակ մտնել:		
Որովհետև մենք երևակայական կենդանիներ ենք:	Գորգի տակ	Վագրը և Ձին
Մի քիչ խաղա՛ ինձ հետ, ես շատ տխուր եմ:		
Նրանք արմատներ չունեն, և դա շատ մեծ անհարմարություն է:		
Բայց եթե դու ինձ ընտելացնես, ապա ինձ համար ամբողջ աշխարհում միակը կդառնաս:		
Աշխարհում կատարյալ ոչինչ չի լինում:		
Կյանքի է կոչում կայաններ լույսի և ինքն իր ճամփին լույս տալով գնում:		



2 Լրացրու աղյուսակը՝ տարբերակելով նախադասություններն՝ ըստ հնչերանգի.

– Հայրիկ, կասե՞ս, թե հայերի
Ո՛ր անունն է ամենից լավ:
Հայրիկն ասաց.– Լսի՛ր, որդի՛ս,
Մենք վատ անուն չունենք բնավ:
Ի՞նչ չքնաղ են մեր Տիգրանը,
Սոսը, Գեղամն ու Միհրանը:

Հարցական նախադասություն	Հրամայական նախադասություն	Բացականչական նախադասություն

3 • Բառաղյուսակում բառերը կարդացվում են ձախից աջ և վերևից ներքև: Գտի՛ր և դո՛ւրս գրիր «Աչքի առաջ» խորագրի քո սովորած բառերը:

թ	բ	ր	դ	ու	ճ	ֆ	ս	ճ	կ	ու	ր	ծ	ք
բ	ա	բ	ա	շ	ու	ռ	և	տ	վ	ց	ա	ֆ	գ
ի	ծ	ե	ր	և	ա	կ	ա	յ	ա	կ	ա	ն	ջ
բ	ա	ր	ձ	ու	ն	ք	դ	ֆ	խ	ջ	ք	ր	ա
ր	ն	ֆ	յ	դ	դ	ա	ե	ֆ	ո	ա	բ	գ	դ
ա	ձ	փ	ա	ր	հ	ա	մ	ա	ր	հ	ե	լ	փ
ու	ր	ս	լ	ն	ա	հ	ֆ	ի	հ	տ	ե	լ	ո
ի	և	ա	ր	և	հ	ա	մ	բ	ու	ր	ե	լ	մ
ֆ	ո	բ	ա	ր	ձ	օ	չ	ա	ր	ա	ճ	ճ	ի
կ	ց	լ	զ	զ	գ	ե	խ	ն	դ	տ	ո	ք	ֆ

• «Աչքի առաջ» խորագրի ո՞ր բառը չկար աղյուսակում: Այդ բառով կազմի՛ր նախադասություն:

4 Փոքրիկ Իշխանն իր մոլորակում հյուրընկալել էր «Ով ենք մենք» թեմատիկ խմբի հերոս-ներին:

- Առաջինը ինչ ցույց կտա իր մոլորակից Փոքրիկ Իշխանը:
- Ինչ կհյուրասիրի հյուրերին:
- Ինչ հարցեր կտան հերոսները Փոքրիկ Իշխանին:
- Փոքրիկ Իշխանին ինչ կհետաքրքրի հերոսների աշխարհից:
- Ո՞ր հերոսները կցանկանան մնալ Փոքրիկ Իշխանի մոլորակում:

5 Այս տեքստում կա յոթ հարցական նախա-դասություն: Արտագրիր դրանք՝ դնելով ութ հարցական նշան:

Մեծահասակները թվեր շատ են սիրում: Երբ նրանց պատմում ես, որ դու նոր բարեկամ ես ձեռք բերել, նրանք

երբեք չեն հարցնում ամենագլխավորի մասին: Նրանք երբեք չեն ասի. «Իսկ ինչպիսի ձայն ունի նա: Ինչ խաղեր է սիրում խաղալ: Թիթեռներ բռնում է, թե ոչ»:

Նրանք հարցնում են. «Քանի տարեկան է նա: Քանի եղբայր ունի: Քաշն ինչքան է: Ինչքան է վաստակում նրա հայրը»: Եվ դրանից հետո երևակայում են, թե ճանաչեցին մարդուն:

Անտուան դը Սենտ-Էքզյուպերի

6 Ընկերներիդ ավելի լավ ճանաչելու համար ստեղծեք ձեր խմբի «Դիմանկարը»:

Աշխատանքի քայլաշարը:

ա. Նշված տեղերում գրիր.

1. Քո անունը:
2. Քեզ հատուկ բնավորության մեկ գիծ:
3. Մեկ նախասիրություն:

բ. Ներկայացրու քեզ և լսիր խմբիդ մյուս անդամներին:

գ. Ձեր խմբի համար միասին գտեք մեկ ընդհանրություն և գրեք թղթի կենտրոնական հատվածում:

դ. Բոլոր խմբերի աշխատանքները փակցրեք դասասենյակի երևացող տեղում:



Կեցցեք, դուք ստեղծեցիք ձեր դասարանի «Դիմանկարը»:

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ



Այս դասին դու՝

- Կզարգացնես նախադասությունները կետադրելու քո կարողությունը:
- Կհասկանաս, որ յուրաքանչյուր մասնագիտություն կարևոր է և հարգանքի արժանի:
- Կպարզես, որ թագավորական հարստությունից ավելի կարևոր բաներ էլ կան:

ԱՆԱՀԻՏ

Ղազարոս Աղայան

Պատկերացնո՞ւմ եք՝ հասարակ նախրապանի աղջիկը պայման է դնում թագավորի տղայի առաջ:

Թագավորն ու թագուհին տեսան, որ չեն կարողանում Վաչագանի միտքը փոխել, կանչեցին նրա մոտ ընկերոջը՝ Վաղինակին, հայտնեցին իրենց հոժարությունը* և, նրա հետ երկու իշխան դնելով, մեծամեծ ընծաներով* ուղարկեցին Հացիկ՝ հարսնախոսության:

Երբ հասան նախրապան Առանի տունը, Առանը նրանց սիրով ընդունեց և շնորհավորեց նրանց գալը:

– Այս ինչ հրաշալի գորգ է,– ասաց Վաղինակը,- տանտիկինդ կլինի գործած, անշուշտ:

– Այդ գորգը մեր Անահիտի գործածն է:

– Մեր թագավորի պալատում էլ չկա մի այսպիսի զարդ,– ասաց իշխաններից մեկը: Հետո, դառնալով Առանին, ավելացրեց,– շատ ուրախ ենք, որ քո աղջիկն այսքան շնորհալի* է: Քո Անահիտի համբավը* մինչև թագավորի ականջն է հասել: Եվ ահա՛, մեզ ուղարկել է քեզ մոտ խնամախոսության: Թագավորը կամենում է, որ քո Անահիտին տաս իր մինուճար* որդուն՝ թագաժառանգ Վաչագանին:

Իշխանն այս առաջարկությունն անելով՝ սպասում էր, որ Առանը կա՛մ չի հավատա, կա՛մ թե, սաստիկ ուրախանալուց, վեր կթռչի տեղից: Բայց Առանը ո՛չ այս արավ և ո՛չ այն:

– Ի՛մ պատվավոր* հյուրեր,– ասաց Առանը,– ես շատ շնորհակալ եմ, բայց ճշմարիտ եմ ասում ձեզ, իմ ձեռին չի տալն ու չտալը: Ահա կգա ինքը, իրեն կհարցնեք. եթե հոժարի, ես ոչինչ չունեմ ասելու:

Հենց այս խոսակցության ժամանակ եկավ Անահիտը:

– Անահի՛տ, ինչո՞ւ ես մենակ գործում,– հարցրեց Վաղինակը,– ես լսել եմ, որ դու աղջիկ աշակերտներ շատ ունես:

– Այո՛, ունեմ մի քսան հոգի,– պատասխանեց Անահիտը:

– Լսել եմ, որ դու քո աշակերտներին կարդալ էլ ես սովորեցնում:

– Այո՛, սովորեցնում եմ: Հիմա մեզանում ամեն մարդ պետք է կարդալ գիտենա:

– Անահի՛տ, ե՛կ այստեղ, քեզ բան ունենք ասելու: Տե՛ս, թե քեզ համար ինչե՞ր է ուղարկել մեր թագավորը:

Վաղինակն այս ասելով՝ բացեց մի կապոց և նրա միջից հանեց ոսկի զարդարանքներ և մետաքսե հագուստներ:

Անահիտն այդ բաները տեսնելով՝ ամենևին չհափշտակվեց և չտեսի նման չզարմացավ, այլ համեստորեն հարցրեց.

– Կարելի՞ է արդյոք իմանալ, թե այդ պատիվն ինչո՞ւ է արել ինձ թագավորը:

– Մեր թագավորի որդին՝ Վաչագանը, քեզ տեսել է աղբյուրի մոտ: Դու նրան ջուր ես տվել, և նա քեզ շատ հավանել է: Հիմա թագավորը մեզ ուղարկել է, որ քեզ նշանենք իր որդու հետ:

– Ուրեմն իմ տեսած որսորդը թագավորի որդի՞ն է եղել:

– Այո՛:

– Նա շատ լավ երիտասարդ էր: Բայց արդյոք գիտե՞ մի որևէ արհեստ:

– Նա թագավորի որդի է, Անահի՛տ, նրան ի՞նչ արհեստ է հարկավոր, ողջ աշխարհի տերը նա է, ամենքն էլ նրա ծառաներն են:

– Գիտեմ, որ այդպես է, բայց ո՛վ գիտե, աշխարհ է, այսօրվա ծառաների տերը վաղը կարող է ինքը լինել ծառա: Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն մարդ պիտի գիտենա, թե՛ ծառա լինի, թե՛ տեր, թե՛ թագավոր և թե՛ իշխան:

Այսպես որ ասաց Անահիտը, իշխանները մնացին իրար երեսի մտիկ տալով: Նայեցին Առանին, տեսան, որ նա շատ հավան է աղջկա ասածին: Հետո դարձան Անահիտին ու կրկին հարցրին.

– Ուրեմն դու թագավորի որդուն չպիտի ուզես միայն նրա համար, որ նա արհեստ չգիտե՞:

– Այո՛, և այս ամենը, ինչ որ բերել եք, հետ կտանեք ու կասեք, որ ես իրեն շատ հավանում եմ, միայն թող ների ինձ: Ես ուխտ եմ արել* արհեստ չգիտցող մարդու չգնալ: Եթե կամենում է, որ ես իր կինը լինեմ, թող նախ և առաջ մի արհեստ սովորի:

Իշխանները վեր կացան գնացին և ինչ որ տեսել, լսել էին, մի առ մի պատմեցին թագավորին: Թագավորն ու թագուհին շատ ուրախացան՝ կարծելով, թե Վաչագանը չի ընդունի նրա առաջարկությունը:

Իսկ Վաչագանը...



Ինչի՞ մասին են զրուցում Վաչագանն ու Վաղինակը:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

շնորհալի համբավ

Հարցեր

1. Ի՞նչ նպատակով էին պալատականները գնում նախարապանի տուն:
2. Առանն ինչպե՞ս դիմավորեց պալատականներին:
3. Ի՞նչ սիրելի աշխատանք էր անում Անահիտը:
4. Ինչպե՞ս հիմնավորեց իր պայմանը Անահիտը:
5. Ի՞նչ կարծիք ունես Անահիտի պայմանի մասին:
6. Ինչպե՞ս թագավորն ու թագուհին ընդունեցին Անահիտի ասածը:

7. Քո կարծիքով՝ ինչպե՞ս կվարվի Վաչագանը:

Առաջադրանքներ

1 Օգտվելով տեքստից՝ կետադրի՛ր տրված նախադասությունները:

- Անահիտ, եկ այստեղ, քեզ բան ունենք ասելու:
- Կարելի է արդյոք իմանալ, թե այդ պատիվն ինչու է արել ինձ թագավորը:
- Անահիտ, նրան ինչ արհեստ է հարկավոր, ողջ աշխարհի տերը նա է, ամենքն էլ նրա ծառաներն են:

2 «Այս ի՞նչ հրաշալի գորգ է» նախադասությունը դարձրո՛ւ բացականչական նախադասություն և գրի՛ր:

3 **ԲԱՌՔԱՄՈՑԻ**

Արհեստավոր բառով խաղա՛ «Բառքամոցի» խաղը: Քո կազմած բառերը համեմատի՛ր ընկերոջդ կազմած բառերի հետ:

4 **ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՉԲԱՌ**

Օգտվելով մեղվապահ, նկարիչ, հյուսն, դարբին, կիթառահար, տիեզերագնաց, խաղողագործ, խոհարար, բժիշկ, ճարտարապետ, հացթուխ, վոլեյբոլիստ, ուսուցիչ բառերից և նկարներից՝ լրացրո՛ւ խաչբառը: Ընդգծված սյունակում կկարդաս, թե ինչն է միավորում բոլոր պատկերվածներին:



Դո՞ւ ինչ մասնագիտություն ես նախընտրում, ի՞նչ գիտես այդ մասնագիտության մասին:

5

Բառարանից օգտվելով՝ գրի՛ր տրված բառերի հոմանիշները:

- ընծա –
- սաստիկ –
- ուխտ –

6 Հարցերի պատասխաններն այնպես գրիր իրար տակ, որ վերևից ներքև կարդացվի **մասնագիտություն** բառը:

1. Պալատականներն ինչպիսի՞ ընծաներով եկան Հացիկ:
2. Ո՞վ էր Անահիտի հայրը:
3. Ի՞նչ նպատակով էին եկել իշխանները:
4. Ո՞վ էր Վաչագանի մոտ ընկերը:
5. Քանի՞ աշակերտ ուներ Անահիտը:
6. Ի՞նչ էր գործում Անահիտը:
7. Վաչագանը թագավորի ____ է:
8. Ամեն մեկը պիտի ____ իմանա:
9. Ես ____ եմ արել արհեստ չգիտցող մարդու չգնալ:
10. ____ շատ ուրախացավ:
11. Վաչագանը չի ընդունի նրա ____:
12. Վաչագանը քեզ տեսել է ____ մոտ:
13. Ի՞նչ մասնագիտություն ուներ Առանը:

7

○ Օգտվելով տեքստից՝ լրացրո՛ւ բաց թողած բառերը:
Այսօրվա ծառաների ____ վաղը կարող է ինքը լինել ____:

✧ Հեքիաթից առանձնացրո՛ւ և գրի՛ր այն նախադասությունը, որն արտահայտում է հեքիաթի հիմնական միտքը:

☼ Արտագրի՛ր այն առածները և ասացվածքները, որոնք, քո կարծիքով, ավելի դիպուկ են արտահայտում հեքիաթի հիմնական միտքը:

- Ով ալարի, ո՛չ դալարի:

- Ուրիշի ձեռքին նայողը սոված կմնա:
- Արհեստը կաթ-կաթ աղբյուր է, եթե չվարարի, չի էլ պակասի:
- Կրթությունը ազատության ոսկե դուռն է:
- Արհեստը ոսկի մատանի է, ուր որ գնաս, հետդ կգա:

8 Պատմիր տեքստը.

- Անահիտի անունից
- Առանի անունից
- Պալատականների անունից

Օրինակ:

Ես նախարապան Առանն եմ: Ապրում եմ գյուղում: Գյուղի նախիրն եմ արածեցնում: Սա էլ հեշտ գործ չէ: Պիտի իմանաս, թե որտեղ ավելի լավ արոտ կա: Կովերին երբ որտեղ տանես, որ կուշտ արածեն, ժամանակին պիտի տանես ջրի մոտ, որ ջուր խմեն, պիտի պաշտպանես գազաններից, թույլ չտաս, որ որևէ մեկը մոլորվի, գայլի բաժին դառնա: Էհ, շատ են գործերը: Մի խոսքով՝ պիտի հասկանաս նախրի լեզուն:

Մի օր տուն եկա, ու աղջիկս՝ իմ գեղեցկուհի Անահիտը, ասաց, որ աղբյուրի մոտ մի համակրելի տղայի է հանդիպել, ջուր է տվել խմելու:



Անահիտը շատ բարի, խելացի աղջիկ է, գործեր է գործում, աշակերտներ ունի: Գյուղում բոլորը սիրում են նրան:

Անահիտի պատմածից մի քանի օր հետո արմանք-զարմանք մի բան պատահեց: Թագավորի մոտից խնամախոսներ եկան՝ թանկագին նվերներով, որ Անահիտին նշանեն աղբյուրի մոտի երիտասարդի հետ: Պարզվում է, որ նա արքայազն Վաչագանն է եղել: Ինձ դիմեցին: Ես ասացի՝ խոսքը Անահիտինն է: Անահիտս էլ, իմանալով, որ Վաչագանը ոչ մի արհեստ չգիտի, մերժեց: Անահիտս իմաստուն սիրտ ունի:

9

Տեքստի բառերից մեկով խաղացել են «Բառքամոցի» խաղը և կազմել իր, դատ, արար, սեր բառերը: Գտի՛ր, թե որ բառն է դա և կազմի՛ր ևս չորս բառ:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես կարողացա՝ 1. Առածներից ընտրել առավել դիպուկը 2._____, 3._____

Ինձ զարմացրեց՝ 1. Որ նախարապանի աղջիկը ուներ 20 աշակերտ 2._____, 3._____

Ես որոշեցի՝ 1. Լավ սովորել, 2_____, 3._____

Ամեն հոգի, ամեն անհատ,
Եթե ունի արհեստ, ուսում,
Նա չի լինի տնանկ, աղքատ:
Ղազարոս Աղայան

Այս դասին դու՝

- Կգրես նկարներով պատկերված բայերի հականիշները:
- Կիմանաս, թե ինչպես պապիկը հնարամտորեն իր փոխարեն թոռնիկին պատմել տվեց հեքիաթը:
- Կկարդաս քեզ ուղղված նամակը և կպատասխանես նամակագրին:

ՊԱՊԻԿԸ, ՈՐԸ ՉԷՐ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՀԵՔԻԱԹ ՊԱՏՄԵԼ

Ջաննի Ռոդարի

Կհանդիպես մի կատակասեր պապիկի, որը հեքիաթ պատմելիս անընդհատ փորձում է շփոթեցնել թոռնիկին:

– Լինում է, չի լինում՝ մի փոքրիկ աղջիկ է լինում, անունը՝ Դեղին գլխարկ...

– Ոչ թե Դեղին, այլ՝ Կարմիր...

– Ա՛խ, հա՛, Կարմիր գլխարկ... Մի անգամ մայրը կանչում է նրան և ասում. «Իմ սիրո՛ւն Կանաչ գլխարկ...»:

– Չէ՛, ի՞նչ Կանաչ, ասացի՝ Կարմիր:

– Լա՛վ, լա՛վ՝ Կարմիր: «Գնա՛ մորաքրոջդ տուն և նրան տար այս տապակած կարտոֆիլը...»:

– Ո՛չ, ո՛չ: Մայրիկն ասում է. «Գնա՛ տատիկի տուն և նրան տար այս կարկանդակները»:

– Լա՛վ, թող այդպես լինի: Աղջիկը գնում է և անտառում հանդիպում ընձուղտին:

– Նորից ամեն ինչ խառնեցիր: Նա հանդիպում է գայլին և ոչ թե ընձուղտին:

– Եվ գայլը հարցնում է նրան. «Ինչքա՞ն կլինի՝ վեց անգամ ութ»:

– Լա՛վ, էլի, պապի՛կ: Գայլը հարցնում է. «Ո՞ւր ես գնում»:

– Ճիշտ ես ասում: Իսկ Սև գլխարկը պատասխանում է...

– Պապի՛կ, դա Կարմի՛ր, Կարմի՛ր գլխարկն էր:

– Լա՛վ, լա՛վ՝ Կարմիր: Նա պատասխանում է. «Ես գնում եմ շուկա՝ բալի մուրաբա գնելու»:

– Ոչ մի նման բան: «Ես գնում եմ տատիկի մոտ, բայց մոլորվել եմ»:

– Ճի՛շտ է: Իսկ ձին նրան ասում է...

– Ի՞նչ ձի: Կարմիր գլխարկը գայլի՛ էր հանդիպել:

– Վա՛յ, մոռացա, իհարկե՝ գայլ, որն էլ ասում է.

«Նստի՛ր յոթանասունվեց համարի ավտոբուսը, գնա՛ մինչև հրապարակ, թեքվի՛ր ձախ, այնտեղ կտեսնես ներքև տանող աստիճաններ: Այդտեղ կտեսնես մի հարյուրդրամանոց: Աստիճաններին ձեռք չտաս, իսկ հարյուրդրամանոցը վերցրո՛ւ և պաղպաղա՛կ գնիր քեզ համար»:

– Պապի՛կ, դու հեքիաթ պատմել բոլորովին չգիտես: Իսկ պաղպաղակ, ի՞նչ էլ լինի, դո՛ւ պիտի գնես ինձ համար:

– Լա՛վ: Ահա՛ քեզ հարյուր դրամ:

Եվ պապիկը նորից սկսեց թերթ կարդալ:

Հարցեր

1. Ո՞ր հեքիաթը «չէր կարողանում» պատմել պապիկը:
2. Ընտրի՛ր և կարդա այն տողերը, որոնք համընկնում են քեզ քաջ ծանոթ հեքիաթի բովանդակությանը:
3. Ի՞նչ հերոսներ կային պապիկի պատմած հեքիաթում:
4. Պապիկի պատմած հեքիաթի ո՞ր մասը քեզ դուր եկավ, ինչո՞ւ:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

յոթանասունվեց ընչուղղ

Առաջադրանքներ

1

Քո կարծիքով՝ պապիկն ինչո՞ւ «չէր կարողանում» պատմել հեքիաթը: Ընտրի՛ր տարբերակներից մեկը:

- Ուզում էր պարզել, թե թոռնիկը հիշո՞ւմ է հեքիաթը:
- Ուզում էր պարզել, թե նա որքան ուշադիր է լսում:
- Ուզում էր զվարճացնել ու զարմացնել թոռնիկին:
- Պապիկը չգիտեր հեքիաթը:
- Ցանկանում էր թոռնիկին մասնակից դարձնել հեքիաթի ստեղծմանը:

2

Գրի՛ր նկարներում պատկերված գործողությունների հականիշները:

3 Տեքստից դուրս գրիր գույն արտահայտող պարզ բառերը, դրանք դարձրու բարդ բառեր և գրիր:

4 Տեքստից դուրս գրիր թվականները: Դրանցով կազմիր բառակապակցություններ և գրիր:

5 Կարդա՛ քեզ հասցեագրված նամակը:

«Բարև, սիրելի՛ չորրորդ դասարանցի: Ես ժողովրդական բանահյուսության ամենատարածված ու սիրելի նմուշներից եմ: Իմ ընկերներն են՝ առակը, պատմությունը, խնդուկը, շուտասելուկը, սուտասելուկը: Ես ծնվել եմ շատ հին ժամանակներում և հասել եմ մինչև ձեր օրերը: Ինձ սիրում են և՛ մեծերը, և՛ փոքրերը: Ես գովաբանում եմ բարին ու ազնիվը, դեմ եմ չարին ու ագահությանը: Ինձ պատմում են ու երգում, կարդում են ու բեմադրում: Ինքս էլ չգիտեմ՝ իմ պատմածները լինում են, թե չեն լինում, բայց ձեզ համար ես երեք խնձոր միշտ բերում եմ»:



Գուշակի՛ր՝ ո՞վ է գրել նամակը:

«Գրի՛ր մի այնպիսի՛ պատմություն, որ ես կարդամ ու ճանաչեմ ինձ»,– ասում է նամակագիրը:

6

Քեզ ծանոթ հեքիաթների ի՞նչ հերոսներ տեսար նկարում: Գրի՛ր:

7

Ընկերներիդ հետ դերային խաղով ներկայացրո՛ւ Շառլ Պեռոյի «Կարմիր գլխարկը» հեքիաթը:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ինձ զվարթացրեց _____

Ինձ հաջողվեց _____

Ես դժվարացա, բայց _____

Քո երազանքները կարող ես արտահայտել՝ ստեղծելով քո հեքիաթը:

Այս դասին դու՝

- Կիմանաս, որ բառերը կարող են տարբեր իմաստներ ունենալ:
- Կհանդիպես մի եղեգնիկի, որը երազում էր երգել:
- Կկարևորես քո երազանքին հասնելու հաստատակամությունը:
- Կպատմես, թե ինչպես ես արտահայտում քո հույզերն ու մտքերը:

ԵՂԵԳԸ, ՈՐԸ ՇԱՏ ԷՐ ՈՒԶՈՒՄ ԴԱՌՆԱԼ ՍՐԻՆԳ

Ղուկաս Սիրունյան

Թե ինչպես սկսեցին երգել եղեգից հյուսած խսիրը, զամբյուղն ու տանիքը:

Հազարավոր եղեգների մեջ կար մի նուրբ*, կարմրավուն եղեգ, որն իր բոլոր ազգակիցների նման ցանկանում էր դառնալ սրինգ: Որովհետև եղեգները սրնգից բացի դառնում են նաև զամբյուղ, խսիր*, տան ծածկ և ուրիշ այլ բաներ: Դե, բնական է, որ այդքանի մեջ ամենատպավորիչը սրինգ դառնալն է: Մեղմ քամու դեմ հեզանազ* ճոճվող եղեգնուտում ամենանրբագեղը Կարմիր եղեգնիկն էր: Ամեն անգամ, երբ գյուղացին գալիս էր եղեգնուտ՝ եղեգ տանելու, սա ձգվում էր ոտքի վրա, բարակ տերևներով ծափ զարկում ու գեղանի ճոճվում,

որպեսզի նկատվի: Բայց ջանքերը* զուր էին անցնում. գյուղացին ուրիշների էր տանում: Իսկ մեկ անգամ աշնանը Կարմիր եղեգնիկի բախտը բերեց: Նրան նկատեց մարդը, հատեց սուր դանակով, խնամքով դրեց կապոցի մեջ, շալակն առած տարավ տուն: Կապոցի եղեգները կարծես անտարբեր էին իրենց ճակատագրի հանդեպ: Տարուբերվելուց նրանք խուլ ձայներ էին հանում, ոմանք նույնիսկ դժգոհում էին այս ուղևորությունից: Իսկ Կարմիր եղեգնիկն անչափ երջանիկ էր, աշխատում էր դարձյալ գեղանի երևալ ու քամու շունչն իր միջով անցկացնելով՝ վերածել հուզիչ* երգի: Գյուղացին եղեգները հասցրեց տուն, դասդասեց, թե որից ինչ պիտի սարքի, ու անցավ գործի: Բայց ի՜նչ դժբախտություն. Կարմիր եղեգնիկը չդրվեց նրանց մեջ, որոնք պիտի սրինգ դառնային: Նրա վշտին չափ ու սահման չկար: Լեզու չուներ, որ խնդրեր, բացատրեր, համոզեր: Իր միակ «զենքը» գեղեցիկ մարմինն էր ու հաճելի երգը: Բայց դրանք չօգնեցին. գյուղացին որից սրինգ* պատրաստեց, որից զամբյուղ ու խսիր հյուսեց, մնացածն էլ դարձրեց տանիքի ծածկ:

Ամենատարօրինակ բախտը բաժին ընկավ Կարմիր եղեգնիկին: Գյուղացին նրանից մի շերտիկ անցկացրեց զամբյուղի մեջ, մի շերտիկ հյուսեց խսիրին, իսկ մնացած մասը դրեց ծածկի մեջ:

...Հետագայում ոչ մեկը գլխի չէր ընկնում, թե այգուց միրգ բերելիս ինչու է երգում զամբյուղը, կամ ինչու է նվագում խնձորենու տակ փռված խսիրը: Իսկ ամենատարօրինակը՝ ո՞վ էր տեսել, որ տանիքը երգի գեղեցիկ ու հուզիչ երգեր...

Հարցեր

1. Ինչ էր երազում Կարմիր եղեգնիկը:
2. Ինչ էր անում Եղեգնիկը իր երազանքն իրականացնելու համար:
3. Ինչ պատահեց Եղեգնիկին:
4. Որտեղ հայտնվեց Եղեգնիկը:
5. Քո կարծիքով՝ իրականացավ, արդյոք, Եղեգնիկի երազանքը: Հիմնավորիր:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

կամ՝ բյուղ նրբագեղ ուղևորություն փարոքինակ

Առաջադրանքներ

1 Ավարտիր նախադասությունները:

Եղեգնիկը անհանգիստ էր, որովհետև_____:
Եղեգնիկը ուրախ էր, որովհետև_____:
Եղեգնիկը տխուր էր, որովհետև_____:

2

ա. Կարդա՛ նախադասությունները:

Երեխան մարզվում էր և կոփում մարմինը:
Գունդը երկրաչափական մարմին է:
Դպրոցի տնօրենությունը ղեկավար մարմին է:
Տեսչական մարմինը այցելեց դպրոց:

Նկատեցի՞ր, որ տարբեր նախադասություններում մարմին բառը տարբեր իմաստներով է գործածված, այսինքն՝ բազմիմաստ բառ է:

բ. Բերան բառը գործածիր նախադասությունների մեջ այնպես, որ նա ունենա տարբեր իմաստներ:



գ. Գլուխ բառը գործածիր նախադասությունների մեջ այնպես, որ նա ունենա տարբեր իմաստներ:

ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Կա այսպիսի մի զրույց: Սրինգը հավերժահարս էր: Հին հունական Պան աստվածն ուզեց բռնել նրան: Սրինգը փախավ և տեսնելով, որ Պանը շուտով հասնելու է, կանգնեց ու դարձավ եղեգ: Պանը կտրեց եղեգը, սրինգ պատրաստեց և նվագեց:

3 Ըստ տեքստի՝ լրացրու անավարտ նախադասությունները:

Եղեգները սրինգից բացի դառնում են _____:

Լեզու չուներ, որ_____:

Իսկ ամենատարօրինակը՝_____:

Հետագայում ոչ մեկը գլխի չէր ընկնում, թե _____:

4 **ա.** Ի՞նչ ձևերով էր Եղեգնիկն արտահայտում իր մտքերն ու ցանկությունները, հույզերն ու զգացմունքները: Գրի՛ր:

բ. Ինչպե՞ս ես դու արտահայտում քո մտքերն ու ցանկությունները, հույզերն ու զգացմունքները: Պատմի՛ր մի դեպք այդ մասին: Լսի՛ր ընկերներիդ պատմածը:

5 • Կարդա՛, թե տեքստն ինչպես է պատմում զամբյուղը:

Մի անգամ ինձ համար հանգիստ նստած էի, մեկ էլ սկսեցի երգել:

Ա՜յ քեզ բան, ես երգելու տրամադրություն բոլորովին չունեի: Նախ՝ նոր էի այգուց տուն եկել: Այնքան միրգ էին լցրել մեջս, որ քիչ էր մնում փորս պայթեր: Հիմա, լավ է, միրգն արդեն դատարկել են: Բայց կատուն եկել, քթիս տակ նստել ու մռլտում է: Սա նույնիսկ ուզում է տեղավորվել իմ մեջ:

Հա՛, բայց ես ինչո՞ւ եմ երգում, էլ ցավ ու դարդ չունե՞մ:

Բայց ես այս երգի ձայնը կարծես թե լսել եմ եղեգնուտում: Մի փոքրիկ, գեղեցիկ Եղեգնիկ կար, ճիշտ և ճիշտ այսպես էր երգում:

– Լսի՛ր, ա՛յ իմ եղեգնուտի երգիչ, այդ դո՞ւ ես:

– Ես եմ: Շատ էի ուզում երգի մրցույթին մասնակցել, բայց դարձել եմ զամբյուղի երգիչ:

– Շատ մի՛ տխրիր,– ասացի Եղեգնիկին:– Մենք քեզ այստեղ էլ ենք շատ սիրում: Դու մեզ ուրախություն ես բերում. չէ՞ որ դու մեր բոլոր եղեգների անունից ես երգում և մե՛զ համար ես երգում:

- Պատմի՛ր տեքստը գյուղացու անունից:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ընտրի՛ր, թե քեզ ամենաշատն ինչը դուր եկավ: Ասա՛ քո տարբերակը:

- Եղեգնի համառությունը:
- Պատմության ավարտը:
- Սրինգի մասին ավանդությունը:

Ընտրի՛ր, թե քեզ ամենաշատն ինչը զարմացրեց: Ասա՛ քո տարբերակը:

- Որ եղեգը մասնատվելուց հետո էլ երգում էր:
- Որ բառերը կարող են բազմիմաստ լինել՝ տարբեր իմաստներ ունենալ:
- Զամբյուղի պատմությունը:

Ընտրի՛ր, թե այս դասից ինչը կցանկանաս պատմել ընտանիքիդ անդամներին: Ասա քո՛ տարբերակը:

- Սրինգի մասին ավանդությունը:
- Թե ինչպես է քո մտերիմ ընկերն արտահայտում իր մտքերն ու ցանկությունները, հույզերն ու զգացմունքները:

Ով երգ ունի իր սրտում,
Երազանքներ ու ձգտում,
Նա կերգի անդադրում՝
Ուրախ լինի, թե՝ տրտում:

«ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս դասին դու՝

- Կվերհիշես թեմատիկ շարքի հերոսներին:
- Ընկերներիդ հետ կլրացնես «Հույզերի աղյուսակը»:
- Բազմիմաստ բառերով կկազմես նախադասություններ:

1

1. Կարդա՛ հերոսների խոսքերը:
2. Գրի՛ր նկարներում պատկերված հերոսների անունները:
3. Ո՞ր խոսքը ո՞ր հերոսինն է:

– Ահա կգա ինքը, իրեն կհարցնեք:

– Այս ի՞նչ հրաշալի գորգ է:

– Մի անգամ ինձ համար հանգիստ նստած էի, մեկ էլ սկսեցի երգել:

– Նա շատ լավ երիտասարդ էր:

– Լինում է, չի լինում՝ մի փոքրիկ աղջիկ է լինում:

– Չէ՛, ի՞նչ Կանաչ, ասացի՝ Կարմիր:

2 Ինչպե՞ս կավարտեն նախադասությունը Անահիտը, պապիկը, Եղեգնիկը: Գրի՛ր:

Երազանքներին հասնելու համար _____:

3 • Բնութագրի՛ր թեմատիկ շարքի հերոսներին:

Պապիկ _____:

Թոռնիկ _____:

Անահիտ _____:

Առան _____:

Եղեգնիկ _____:

Գյուղացի _____:

• Ինչպե՞ս կբնութագրեն թեմատիկ շարքի հերոսներն իրենց:

4 Ո՞ր բառը պետք է գրել շրջանակում:

մարդու
սարի
գրքի
սոխի
կաղամբի
տարվա
առվի

_____

ա. ոտք, **բ.** ձեռք, **գ.** գլուխ, **դ.** ծնոտ, **ե.** մատանեմատ

5 Մնջախաղով ներկայացրո՛ւ:

• Եղեգնիկին, որն ուզում էր, որ իրեն նկատի գյուղացին:

• Թոռնիկին, որին զարմացրել էր պապիկի հեքիաթը:

6 Լրացրու «Հույզերի աղյուսակը» և ավելի լավ ճանաչիր ընկերոջդ:

«Ինչ եմ անում ես» սյունակը լրացրու ինքդ, իսկ «Ինչ է անում ընկերս» սյունակը լրացնելու համար հարցրու ընկերոջդ:

Հույզեր	Ինչ եմ անում ես	Ինչ է անում ընկերս
Զարմանքից		
Վախից		
Տխրությունից		
Բարկությունից		
Ուրախությունից		

7 «Աչքի առաջ» խորագրի՝ համբավ, շնորհալի, ուղևորություն, յոթանասունվեց, ընձուղտ, նրբագեղ, տարօրինակ, զամբյուղ բառերը տեղադրիր տեքստում:

Մեծ _____ ունեցող թագաժառանգ Վաչագանը մի _____ կատարեց Աֆրիկա: Նա այնտեղից բերեց _____ երկարավիզ _____ ու նվիրեց _____ Անահիտին: Սակայն Անահիտը չընդունեց այդ _____ նվերն ու ասաց. «Ընձուղտները լավ կլիներ ապրեին իրենց երկրում՝ ազատ ու երջանիկ»: Իսկ ինքը կնախընտրի ընկերանալ մեկին, ով _____ ձեռքեր ունի և կարող է հասարակ _____ գործել ու նվիրել իրեն:

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱՋՄԱԿԵՐՊՎՈՒՄ

Այս դասին դու՝

- Կզարգացնես բազմիմաստ բառերի մասին գիտելիքներդ:
- Բանաստեղծությունը կկարդաս համապատասխան հնչերանգներով:
- Կիմանաս, թե ինչն է ամենաբարձրը, որը աստղերից ու արևից էլ վեր է:
- Երազանքիդ հասնելու ճանապարհին կկարևորես ընկերներիդ օգնությունը:

ԱՄԵՆԱԲԱՐՁՐԸ

Երվանդ Պետրոսյան

Եթե աստղին լուռ հարցնես՝
Ինչո՞ւ այդքան դու բարձր ես,
Հանդարտ լույսով նա կասի քեզ՝
Թե երազես, ինձ էլ կանցնես:

– Դե՛, ձե՛զ տեսնեմ, ի՛մ թոռնիկներ,
Մտածե՛ք ու ասե՛ք.
Բարձրից բարձր ի՞նչն է կյանքում,
Ուզում եմ ձեզ լսել:

Պապի խոսքը դեռ չավարտված՝
Բակը իրար անցավ...
Մի տեսնեիք՝ փոքրիկները
Ինչպե՛ս ուրախացան:

– Ծա՛ռն է բարձրը,– մեկը կանչեց:
– Տո՛ւնն է,– մեկը ճչաց:
– Արարա՛տն է,– ինչեց մի ձայն:
– Ա՜մպն է՝ լեռանն իջած:

– Ինքնաթիռն է...
– Չէ, հրթիռն է...
– Չէ, լուսինն է, որ կա:
– Բա արևը... բա արևը...
– Աստղից բարձրը չկա՛:
Ու կանգ առան:
Ու լռեցին:
Ինչ ասեին,
Էլ ինչ...
Վերև, ներքև հա նայեցին,
Բայց չգտան ոչինչ:

Եվ խմբվեցին շուրջը պապի.
– Պապիկ, գտա՞նք, ասա՛:
Պապը ժպտաց.
– Չէ, չգտաք....
Թեկուզ՝ երկինք հասաք:
Բարձրից բարձր,
Իմ թոռնիկներ,
Երազանքն է մարդու.
Արևից վեր, աստղերից վեր...
Աննահանջ* ու արթուն:

Եթե սիրով մեկդ մեկիդ
Դառնաք թև ու թիկունք*,
Երազանքից թևեր առած՝
Կբարձրանաք և դուք:

Հարցեր

1. Ինչ հարց տվեց պապիկը թոռներին:
2. Ինչ պատասխաններ տվեցին փոքրիկները:
3. Ըստ պապի՝ ինչն էր ամենաբարձրը:
4. Ինչ խորհուրդ տվեց պապիկը թոռներին:
5. Դու ինչպե՞ս կպատասխանես պապի հարցին:

Առաջադրանքներ

1 Ինչպիսի՞ն պետք է լինի մարդու երազանքը՝ ըստ բանաստեղծության:
Արտագրի՛ր այդ տողերը:

2 Ի՞նչ է նշանակում **թև ու թիկունք դառնալ** դարձվածքը:

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը և գրի՛ր:

1. Պաշտպան, օգնական, աջակից դառնալ:
2. Թիկունքով շրջվել իրար:
3. Թիկունքից հարվածել:

3 Արտագրի՛ր փոքրիկների պատասխանները՝ բացականչական նշանը փոխարինելով հարցական նշանով և կարդա՛ համապատասխան ինչերանգով:

4 **Երազանքների իրականացում**

- Ի՞նչ երազանքներ ունես: Գրի՛ր դրանցից մեկը:
- Կարդա՛ գրածդ ընկերներիդ համար:
- Ուշադի՛ր լսիր ընկերներիդ:
- Գտի՛ր նույն երազանքն ունեցող ընկերներիդ:
- Միասին մտածե՛ք, թե ինչ կարող եք անել ձեր երազանքին հասնելու համար:
- Ներկայացրե՛ք մյուս խմբերին:

5 **Նկարելուկ**

Նկարելուկի պատասխանով խաղացե՛ք «Բառքամոցի» խաղը:

6

Կազմի՛ր նախադասություններ՝ բազմիմաստ թև բառը գործածելով հետևյալ նշանակություններով.

- թռչունների թռչելու հիմնական միջոցը,
- ինքնաթիռի վեր բաձրացնող մասերից մեկը,
- մարդու բազուկ, ձեռք,
- երկփեղկ դռան ամեն մի փեղկը,
- խաչի հորիզոնական փայտի մասերից յուրաքանչյուրը:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

	Նշի՛ր քո ձեռքբերումները	+
1.	Ես իմացա, թե ինչն է ամենաբարձրը:	
2.	Ես իմացա երազանքներին հասնելու ճանապարհը:	
3.	Արտահայտիչ կարդացի բանաստեղծությունը:	
4.	Կարողացա բացատրել դարձվածքի իմաստը:	
5.	Փոփոխեցի նախադասություններ՝ ըստ հնչերանգների:	
6.	Վերծանեցի նկարելուկը, պատասխանից «քամեցի» բառեր:	
7.	Բազմիմաստ բառով նախադասություններ կազմեցի:	
8.	Գտա նույն երազանքն ունեցող ընկերներիս:	

Այս դասին դու՝

- Կամրապնդես թվականի մասին գիտելիքներդ:
- Կիմանաս, թե «Շախմատ» խաղն ստեղծողը ցորենի քանի հատիկ է ուզել խաղատախտակի ամեն մի վանդակի համար:
- Կստեղծես շախմատային դիրքեր և կխաղաս:
- Կկարևորես միասնական լինելն ու համագործակցելը ինչպես շախմատում, այնպես էլ կյանքում:

ՇԱԽՄԱՏ

Ռաֆայել Հայրապետյան

Պետք է գործել ուս ուսի,
Ոչ թե անջատ, մեկուսի:

Շախմատ խաղալիս Գոռն ասաց. «Վաչե՛,
Գործերդ ոնց որ այնքան էլ լավ չեն»:
– Իսկ ինչո՞ւ, ա՛յ Գոռ, ի՞նչ է եղել որ,
Ես ունեմ երեք անցունակ* զինվոր:
– Բայց իմ փղերը՝ խենթ ու համարձակ,
Նրանց կճզմեն հաստ ոտքերի տակ:
– Քո փղերը, Գո՛ռ, մեկտեղ չեն գործում,
Միմյանց պաշտպանել նույնիսկ չեն փորձում,
Իսկ զինվորներն իմ շատ են քաջարի,
Տե՛ս՝ ոնց են մեկտեղ ելել պայքարի:
Իսկ որտեղ որ կա սեր ու միություն,
Այնտեղ չի լինի երբեք պարտություն:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

համարյակ երբեք փորձել

Հարցեր

1. Գոռն ինչո՞ւ էր համոզված, որ ինքը կհաղթի:
2. Ի՞նչ պատասխան տվեց Վաչեն Գոռին:
3. Տղաներից ո՞ր մեկի խաղաքարերն ունեին դիրքային առավելություն:
4. Այս մրցապայքարում ի՞նչը կօգնի հաղթանակին:
5. Քո կարծիքով՝ ինչո՞վ է շախմատը նման կյանքին:

Առաջադրանքներ

1 Օգտվելով տեքստից՝ ավարտի՛ր նախադասությունները:

Գոռի խաղաքարերը _____:
Վաչեի խաղաքարերը _____:

2 Վերականգնի՛ր «քանդված» առածները և գրի՛ր:

շուռ Գյուղ կտանք: Ուս կանգնի՝ ուսի
գերան որ կկոտրի: տանք, սարեր

3 Ըստ տեքստի՝ ընկերոջդ հետ ստեղծի՛ր շախմատային դիրքեր և խաղա՛:

4 Լրացրո՛ւ խաչբառը և ընդգծված սյունակում կկարդաս, թե հայերն ինչ բառ են գործածել շախմատ բառի փոխարեն:

1. Հայոց այբուբենի տառի անուն, որի թվային արժեքը 100 է:

2. Թագ ունեցող խաղաքար, որին կարող են մատ հայտարարել:

3. Հաղթանակ կամ պարտություն շախմատում:

4. Խաղաքար, որից ամենաշատը կա խաղատախտակի վրա:

5. Թեկուզ նա թագ ունի, բայց արքայի համար կզոհի իրեն:

6. Եվ ջրում է լավ լողում, և խաղատախտակի վրա:



ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Մենք՝ հայերս, շախմատ բառը միայն վերջին ժամանակներում ենք գործածում: Շախմատ = շախ + մատ, որը նշանակում է մահ շահին (արքային): Մենք նախկինում գործածել ենք ճատրակ բառը: Խաղը հնարել են Հնդկաստանում անհիշելի ժամանակներում: Ճատրակ-ը կազմված է հին հնդկերեն ճատր (չորս) և անգ (մաս) բառերից և թարգմանվում է քառանդամ կամ չորեքմասնյա:

ՇԱԽՄԱՏԸ ԵՎ ՄԵՆՔ

Հայաստանում շախմատը հայտնի է դեռևս 9-րդ դարից: Նույնիսկ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքում՝ Դվինում, հնագիտական աշխատանքներ կատարելիս հայտնաբերվել են շախմատի խաղաքարեր:

Հայաստանում շախմատը ժողովրդական դարձավ հատկապես Տիգրան Պետրոսյանի շնորհիվ: 1963 թվականին Պետրոսյանը դարձավ շախմատի աշխարհի չեմպիոն*: Պետրոսյանը վեց տարի անընդմեջ (1963-1969) եղել է աշխարհի չեմպիոն, ինն անգամ՝ շախմատային օլիմպիադայի (1958-1974) հաղթող: Այդ տարիներին Հայաստանում այնքան մեծ էր շախմատի և Տիգրան Պետրոսյանի նկատմամբ հայերի համակրանքն ու խանդավառությունը, որ շատ շատերն իրենց երեխաների անունները Տիգրան էին դնում, տանում շախմատի պարապմունքների:

Մեծ են փոքրիկ Հայաստանի նվաճումները համաշխարհային մրցաբեմերում:

Հայաստանը բազմիցս հաղթող է ճանաչվել շախմատային օլիմպիական խաղերում* և աշխարհի առաջնություններում: Այդ իսկ պատճառով Շախմատի միջազգային ֆեդերացիան Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականը ճանաչել է հարյուրամյակի լավագույն թիմ:

Մեկ անգամ ևս համոզվում ենք, որ երբ միասնական ենք ու միակամ, ապա ուժեղ ենք և անպարտելի:

2011 թվականից շախմատը՝ որպես ուսումնական առարկա, դասավանդվում է ՀՀ հանրակրթական դպրոցներում:

5

«Շախմատը և մենք» տեքստից դուրս գրիր թվականները և գրիր բառերով:

ԹՎԱԿԱՆՆԵՐ

Գրվում են մեկ բառով	Գրվում են միասին	Գրվում են առանձին
թվանշանները (0-9)	11 – 99 թվերը՝ • տասներեք • երեսունչորս • յոթանասունյոթ • ութսունինը • իննսունինը	100-ից մեծ թվերը՝ • հարյուր մեկ • հարյուր քսանչորս • երկու հարյուր տասնութ • երկու հազար երեք հարյուր տասնվեց • երեք հազար ինը • յոթ միլիոն քսան
կլոր թվերը (10, 20, …90) և՝ հարյուր • հազար • միլիոն • միլիարդ		

ՄԻ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Օրերից մի օր հնդիկ թագավորի շքեղ պալատ է գալիս մեկը և ասում, որ մի շատ հետաքրքիր խաղ է հորինել: Թագավորը շատ է հավանում նրա ստեղծած խաղը, որը շախմատն էր:

Ասում է՝ ի՞նչ պարգև ես ուզում այս խաղի համար:

Խաղն ստեղծողը պատասխանում է.

– Ես ուզում եմ, որ շախմատի տախտակի 1-ին վանդակի համար ինձ տաք ցորենի մեկ հատիկ, 2-րդ վանդակի համար՝ երկու անգամ շատ, 3-րդ վանդակի համար՝ երկու անգամ շատ՝ չորս հատիկ, և այդպես շարունակ՝ մինչև 64-րդ վանդակը:

Թագավորն ասում է.

– Շատ քիչ բան ես ուզում այս հրաշալի խաղի համար:

Եվ հրամայում է, որ հաշվեն ու տան: Պալատական գիտնականները հաշվում են և տեսնում, որ անհնար է այդքան ցորեն տալ: Նրանք ասում են, որ եթե հնարավոր լիներ երկրագնդի ամբողջ մակերևույթով մեկ ցորեն ցանել, 8 տարի բերքը հավաքել ու պահեստավորել, ապա դարձյալ թագավորը չէր կարողանա խաղը հնարողի պահանջը կատարել:

Որպես գաղտնիք ասենք, որ հատիկների թիվը 20-նիշանոց թիվ է՝ 18446744073709551615:

Եկեք հաշվենք, թե առաջին 14 վանդակի համար քանի հատիկ ցորեն է պետք՝ 1, 2, 4, 8, 16, 32, 64, 128, 256, 512, 1024, 2048, 4096, 8192:

Այս 8192 հատիկի ընդհանուր զանգվածը մոտավորապես 330 գրամ է:

6

Այժմ հաշվե՛ք, թե որերորդ վանդակում ցորենի հատիկների զանգվածը կանցնի 1 տոննայից:

7

Տեքստից դո՛ւրս գրիր երեքական գոյական, ածական, թվական, բայ:

Գոյական _____: **Ածական**_____:

Թվական_____: **Բայ** _____:

8

Լրացրու աղյուսակը՝ գոյականները դարձնելով բայ և ածական:

Գոյական	Ածական	Բայ
արև		
անձրև		
պար		

9

Վերականգնիր առածները: Գտիր դրանցում եղած թվականների գումարը: Այդ թվով հիշիր մի առած և գրիր:

1. ծափ տա Մի չի ձեռքը
2. կլվանա, ձեռքը՝ Ձեռքը երես երկու ձեռք
3. երկուսը՝ Մի լավ ավելի խելքը է, լավ
4. չի ծաղկով գարուն Մի լինի

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես իմացա, որ _____

Ինձ հաջողվեց _____

Ես դժվարացա, երբ _____

Շախմատն ինձ կօգնի, որ ես _____

Միասնականությունը բազմապատկում է ուժերը, մղում հաղթանակների:

Այս դասին դու՝

- Կամրապնդես նախադասությունները համառոտելու քո կարողությունները:
- Կհորինես պատմություն:
- Կհայտնվես բույսերի թագավորությունում:
- Կտեսնես, թե ինչ են անում թզուկները:

ՉԻՊՈԼԻՆՈ

Ջաննի Ռոդարի

Հեքիաթ, որտեղ բույսերն իրենց պահում են մարդկանց պես, իսկ մարդիկ՝ բույսերի:

- Ուշադիր դիտիր նկարը, հորինիր մի պատմություն:
- Կարդա՛ տեքստի առաջին պարբերությունը:
- Բովանդակությունը համեմատիր քո հորինած պատմության հետ:



Մի բոլորովին ոչ գեղեցիկ օր չորս վարունգ լծած իր կառքով ժամանեց պարոն Լոլիկը: Այս անգամ նրան մի տասներկու Կիտրոնիկ էր ուղեկցում: Առանց երկար-բարակ խոսելու, սրանք քավոր Դդումին դուրս արեցին տնից, իսկ նրա տեղը Մաստինո անունով մի հսկա տնապահ շուն դրեցին:

– Ահա,– սպառնագին շուրջը նայելով՝ հայտարարեց Լոլիկը,– հիմա ձեր բոլոր լակոտները կսովորեն ինձ հարգել:

– Ճի՛շտ է, ճի՛շտ է,– խուլ հառաչեց Մաստինոն:

– Ինչ վերաբերում է ծերուկ Դդումին,– շարունակեց պարոն Լոլիկը,– նա այսուհետև կսովորի իմ հրամաններին ենթարկվել: Իսկ եթե շատ է ուզում ծածկի տակ ապրել, ապա նրա համար միշտ էլ մի հարմար տեղ կճարվի բանտում: Այնտեղ բոլորի համար էլ տեղ կլինի:

– Ճի՛շտ է, ճի՛շտ է,– նորից հաստատեց Մաստինոն:

Վարպետ Խաղողն ու Չիպոլինոն, արհեստանոցի շեմքին կանգնած, ամեն ինչ տեսնում ու լսում էին, բայց ծերուկին ոչնչով չէին կարող օգնել:

Քավոր Դդումը տխուր նստել էր կոճղի վրա և մորուքի մազերն էր փետում: Ամեն անգամ քաշելիս՝ ձեռքին մի փունջ մազ էր մնում: Ի վերջո, նա որոշեց թողնել այդ զբաղմունքը, որ անմորուք չմնա, ու սկսեց կամաց-կամաց հառաչել: Իսկ քավոր Դդումը հառաչանքի մեծ պաշար ուներ:

Վերջապես պարոն Լոլիկը մտավ իր կառքը: Մաստինոն կանգնեց առջևի թաթերին և իր տիրոջը պոչով պատիվ տվեց:

– Տե՛ս, հա՛, կհսկե՛ս,– հրամայեց պարոն Լոլիկը, մտրակեց Վարունգներին, և կառքը, փոշու ամպ բարձրացնելով, առաջ սլացավ:

Ամառային հրաշալի շոգ օր էր: Տիրոջ գնալուց հետո Մաստինոն, շոգից լեզուն դուրս գցած, պոչը հովհարի նման թափ տալով, մի քիչ զբոսնեց տնակի առջև: Բայց ոչինչ չէր

օգնում: Շունը շոգից ուժասպառ եղավ: «Հիմա վատ չէր լինի, որ մի բաժակ սառը ջուր խմեի»,- մտածում էր նա:

Շուրջը նայեց, տեսնի՝ մի հարմար երեխա չկա՞, որ ուղարկի մոտակա պանդոկը*՝ հյութ բերելու, բայց փողոցում հակառակի պես ոչ ոք չկար: Ճիշտ է, կոշկակարի արհեստանոցում բաց դռնից երևում էր Չիպոլինոն, բայց նրանից սոխի այնքան կծու հոտ էր փչում, որ Մաստինոն սիրտ չէր անում նրան կանչել:

Հարցեր

1. Ինչո՞ւ էր օրը «բոլորովին ոչ գեղեցիկ»:
2. Ի՞նչ պատահեց քավոր Դդումի հետ:
3. Ի՞նչ հրամայեց Լոլիկը Մաստինո շանը:
4. Ի՞նչ էր ուզում Մաստինոն:
5. Քո կարծիքով՝ ի՞նչ կանի Մաստինոն:

Առաջադրանքներ

1

Գրի՛ր, թե որ գործողությունը որ հերոսն է անում:

Օրինակ՝ պատիվ տվեց – Մաստինո:

Ժամանեց, ուղեկցեցին, հառաչեց, զբոսնեց, նստեց, հրամայեց, պոկեց, մտրակեց:

2

○ Քանի՞ Կիտրոնիկ էր ուղեկցում Լոլիկին: Գրի՛ր բառերով:

✧ Այդ թվականով կազմի՛ր բառակապակցություններ:

☼ Այդ թվականի արմատներով կազմի՛ր նոր բառեր:

3 Ամեն անգամ մի բառ հանելով՝ համառոտի՛ր նախադասությունը:

Քավոր Դդումը տխուր նստած էր մի կոճղի վրա:

4 Ըստ տեքստի՝ լրացրո՛ւ բաց թողած բառերը և գրի՛ր այդ բառերի հոմանիշները:

Ամառային հրաշալի _____ օր էր:
Մաստինոն _____ տնակի առջև:
Շունը շոգից _____:

5 Նկարագրի՛ր, թե ինչ ես տեսնում նկարում: Ի՞նչ են զրուցում կենդանիները: Ի՞նչ են անում թզուկները:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ես ծանոթացա _____
Ես կարողացա _____
Ես ստեղծեցի _____

Այս դասին դու՝

- Կամրապնդես նախադասությունների մասին գիտելիքներդ:
- Կգնահատես Չիպոլինոյի արարքը:
- Կպարզես, թե սոխն ինչպես են անվանում իտալերեն:

ՉԻՊՈԼԻՆՈ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՉԻՊՈԼԻՆՈՆ ԽԱԲԵՑ ՄԱՍՏԻՆՈ ՇԱՆԸ

(շարունակություն)

Թե ինչպես կեսօրվա շոգը փրկեց Քավոր Դդումի մորուքը:

Սակայն Չիպոլինոն ինքը նկատեց, որ շունը շոգից նվաղում* է: «Ես Չիպոլինոն չլինեմ, եթե դրա գլխին մի փորձանք չբերեմ»,– մտածեց նա:

Իսկ շոգը քանի գնում ուժեղանում էր, որովհետև արևն ավելի էր բարձրանում: Խեղճ Մաստինոն այնքա՜ն խմել էր ուզում:

– Է՛յ, է՛յ,– թույլ ձայնով կանչեց Մաստինոն:

– Դուք ի՞նձ եք կանչում, պարո՛ն:

– Ձե՛զ, պատանյա՛կ, ձեզ: Գնացե՛ք, ինձ համար մի շիշ սառը հյո՛ութ բերեք, խնդրում եմ:

– Ա՛խ, ես մեծ ուրախությամբ կգնայի, պարո՛ն Մաստինո, բայց իմ տերը հենց նոր կարկատելու տվեց այս կոշիկը, և ես ոչ մի կերպ չեմ կարող բացակայել:

Ճիշտն ասած, Չիպոլինոն ամբողջ հոգով խղճում էր ծարավից տանջվող շանը, բայց նրան դուր չէր գալիս այն արհեստը, որով զբաղվում էր Մաստինոն, բացի դրանից, ուզում էր մի անգամ էլ դաս տալ պարոն Լոլիկին:

Մոտ ժամը երեքին արևն այնպես սկսեց այրել, որ փողոցում նույնիսկ քարերը քրտնեցին: Մաստինոն շոգից ու ծարավից քիչ մնաց կատաղեր:

Վերջապես Չիպոլինոն վեր կացավ իր աթոռից, մի շիշ ջուր լցրեց և ավելացրեց այն սպիտակ դեղափոշուց, որ անքնության դեմ ընդունում էր վարպետ Խաղողի կինը:

Նա մատով փակեց շշի բերանը, մոտեցրեց շրթունքներին՝ ցույց տալով, թե խմում է:

– Պարո՛ն Չիպոլինո,– զարմացած հարցրեց Մաստինոն,– այդ ինչպե՞ս է, որ շիշը միշտ լիքն է մնում:

– Բանն այն է,– պատասխանեց Չիպոլինոն,- որ այս շիշը իմ ողորմածիկ* պապի նվերն է: Սա կախարդական շիշ է և երբեք չի դատարկվում:

– Իսկ դուք ինձ չե՞ք թողնի, որ մի քիչ խմեմ, գոնե մի կում: Մի կում միայն:

– Մի կո՞ւմ: Խմե՛ք ինչքան ուզում եք,- պատասխանեց Չիպոլինոն,– ես ձեզ ասացի, որ իմ շիշը երբեք չի դատարկվում:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչքան ուրախացավ Մաստինոն: Նա անընդհատ շնորհակալություն էր հայտնում Չիպոլինոյին, լիզում էր նրա ոտքերը և պոչը շարժում:

Չիպոլինոն ջուրը մեկնեց Մաստինոյին: Սա շիշը խլեց տղայի

Ինչո՞ւ է ժպտում Չիպոլինոն:

ձեռքից և ագահորեն ամբողջ ջուրը մի կում արեց: Դատարկ շշին նայելով՝ նա զարմացավ:

– Ինչպե՞ս, արդեն վերջացա՞վ: Իսկ դուք ինձ ասում էիք, թե շի...

Նա այդպես էլ չկարողացավ վերջացնել, ընկավ ու քնեց:

Չիպոլինոն շղթան հանեց, շանը շալակեց ու տարավ այն ամրոցի մոտ, որտեղ ապրում էին կոմսուհի Բալերն ու պարոն Լոլիկը: Հետ դառնալով՝ նա տեսավ, որ Քավոր Դդումն արդեն նորից տիրացել է իր տնակին: Ծերուկի դեմքը և պատուհանից դուրս ընկած քրքրված մորուքն աննկարագրելի ուրախություն էին արտահայտում:

«Խե՜ղճ շուն,– մտածում էր Չիպոլինոն,– դու ինձ ներիր, խնդրում եմ, բայց ես պարտավոր էի այդպես վարվել»:

Հարցեր

1. Չիպոլինոն ինչո՞ւ չէր ցանկանում օգնել Մաստինոյին:
2. Հեղինակն ինչպե՞ս է նկարագրում փողոցի շոգը: Կարդա՛ այդ հատվածը:
3. Ի՞նչ հնարամտությամբ Չիպոլինոն խաբեց շանը:
4. Ինչո՞ւ էր նա ուզում դաս տալ Լոլիկին ու Մաստինոյին:

Առաջադրանքներ

1 ՀԵՔԻԱԹԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

- Ովքե՞ր էին հեքիաթի հերոսները:
- Ի՞նչ խմբերի կբաժանես նրանց:
- Բնութագրի՛ր հերոսներին:

2 Կարդա՛ և որոշի՛ր, թե ինչի մասին է հեքիաթի վերջին նախադասությունը:

Չիպոլինոյի՝

- քաղաքավարության և ափսոսանքի,
- գոռոզամտության և պարծենկոտության,
- ուրիշների նկատմամբ պատասխանատվության,
- հնարամտության և ճարպկության,
- խղճմտանքի և կարեկցանքի:

3 Օգտվելով տեքստից՝ լրացրո՛ւ բաց թողած.

ա. գոյականները.

Ծերուկի _____ և _____ դուրս ընկած քրքրված _____ աննկարագրելի _____ էին արտահայտում:

բ. բայերը.

Չիպոլինոն ջուրը _____ Մաստինոյին: Սա շիշը _____ տղայի ձեռքից և ագահորեն ամբողջ ջուրը մի կում _____: Դատարկ շշին նայելով՝ նա _____:

4 Վերականգնի՛ր նախադասությունների հաջորդականությունը՝ ըստ տեքստի և գրի՛ր:

- Տիրոջ գնալուց հետո Մաստինոն, շոգից լեզուն դուրս գցած, պոչը հովհարի նման թափ տալով, մի քիչ զբոսնեց տնակի առջև:

- Մոտ ժամը երեքին արևն այնպես սկսեց այրել, որ փողոցում նույնիսկ քարերը քրտնեցին:

• Մաստինոն անընդհատ շնորհակալություն էր հայտնում Չիպոլինոյին, լիզում էր նրա ոտքերը և պոչը շարժում:

• Վարպետ Խաղողն ու Չիպոլինոն, արհեստանոցի շեմքին կանգնած, ամեն ինչ տեսնում ու լսում էին, բայց ծերուկին ոչնչով չէին կարող օգնել:

5 Ընդարձակի՛ր համառոտ նախադասությունը:

• Շիշը չի դատարկվում:
• _____ շիշը չի դատարկվում:
• _____ շիշը _____ չի դատարկվում:
• _____ _____ շիշը _____ չի դատարկվում:

6 Հանելուկներով խաչբառ

Լուծի՛ր խաչբառը: Ընդգծված սյունակում կստանաս փոքրիկ սոխի իտալերեն անվանումը:

1. Ողկույզներով անթերի
Թագուհին է մրգերի,
Ով որ թողնի չորանա,
Պատասխանը կստանա:

2. Դեղին է՝ գանձ չէ,
Պտուղ է՝ տանձ չէ,
Թթու է՝ թան չէ,
Ամեն մարդու բան չէ:



3. Կեսը տաք է, կեսը՝ դեղ,
Չես հանդիպի ամեն տեղ,
Մանր-մանր թե աղաս,
Զգո՛ւյշ, հետը չխաղաս:

5. Կարմիր, կլոր ու թթվաշ,
Ծառի վրա՝ զարդանախշ:

7. Կանաչ, հաստլիկ մի արկ է,
Պինդ ջրով լի մի պարկ է,
Կանաչ թփից են քաղում,
Եվ թարմ ուտում, և՛ աղում:



4. Շատ շորեր ունի հագին,
Ով հանի, կլացի ահագին:

6. Երկար, կանաչ պարկիկներ,
Ներսում՝ տափակ գնդիկներ:

8. Երբ դեռ խակ եմ՝ կանաչ եմ,
Ձեզ բոլորիդ ճանաչ եմ,
Կարմիր եմ ես՝ ալ խնձոր,
Օտար բառով՝ պոմիդոր:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ
Գրի՛ր կամ ասա՛.

3 բան, որ կարողացար անել,
2 բան, որ կարևորեցի՛ր,
1 բան, որի մասին կպատմես մյուսներին:

Մենք տեսանք, թե ինչպես բույսերը սկսեցին իրենց պահել մարդկանց պես, որ մարդիկ տեսնեն ու ճանաչեն իրենց:

Այս դասին դու՝

- Կծանոթանաս զգայական վերաբերմունք արտահայտող բառերի:
- Նախադասությունները կկարդաս համապատասխան հնչերանգով:
- Կիմանաս, թե ինչ «հանցանքներ» է կատարել պատմվածքի հերոսը:
- Կզարմանաս փոքրիկ հերոսի մեծ հնարամտության վրա:

ՀՆԱՐԱՄՏՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԱՊԱՏԸ

Մարկ Տվեն

Թե ինչպես ամառային մի շոգ օր ցանկապատ ներկելը դարձավ բաղձալի զբաղմունք:

ՑԱՆԿԱՊԱՏԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ

Վաղուց եմ կանգնած այգու եզրին: Արևն ամբողջովին քայքայել է ներկս: Քանի՞ անգամ է իմ վրայով թռել Թոմը, իսկ հիմա՝ դույլը ձեռքին եկել է ինձ ներկելու: Հաստատ պատժել են, թե չէ ինքնակամ չէր գա: Բայց տեսնեմ կներկի՞ ինձ, հավատս չի գալիս: Թեև Թոմին ես սիրում եմ:

Ազնիվ հոգի ունի: Համարձակ է, շատ ինքնուրույն և հնարամիտ:

Դե՛, քե՛զ տեսնեմ, չհիասթափեցնես ինձ, Թո՛մ: Լա՛վ ներկիր ինձ:

Վա՛յ, էս ի՞նչ ծուլորեն է ներկը քսում քթիս:

Սա հաստատ մի բան կհորինի:

Թոմն այսօր մի քանի «հանցանք» է կատարել. կերել է մուրաբան, սուտ է խոսել, կռվի մեջ է ընկել, կեղտոտել ու պատառոտել է հագուստը, փախել է դպրոցից՝ գնացել գետում լողալու:

Եվ այժմ Թոմի համար մորաքույր Փոլին պատիժ է մտածել: Հանգստյան օրը, երբ բոլոր երեխաները գնում են գետը լողալու, Թոմը պետք է ներկի ցանկապատը:

Մայթին հայտնվեց Թոմը, մի ձեռքին՝ կրով լի դույլ, մյուս ձեռքին՝ մի երկար վրձին: Տղան նայեց երկար ցանկապատին, և նրա սրտից դուրս թռավ ամեն մի ուրախություն:

Հառաչելով նա վրձինը թաթախեց կրի մեջ և քսեց վերևի տախտակին: Նորից մի քանի անգամ քսեց, ապա սպիտակ գույնով ներկված այդ աննշան մասը համեմատեց չներկված տախտակների հետ և հուսահատ* նստեց տակառի վրա:

Այդ պահին երևաց Բեն Ռոջերսը, հենց այն տղան, որի ծաղրանքներից Թոմը բոլորից շատ էր վախենում:

– Հի՛, հի՛: Կոճղին ես կապված, հա՞:

Ոչ մի պատասխան: Թոմն արվեստագետի աչքով նայեց իր ներկածին, վրձինը մի թեթև քսեց և հետ գնաց ավելի լավ նայելու համար: Հետո ասաց.

– Ա՜խ, այդ դո՞ւ ես, Բե՛ն, չնկատեցի:

– Հը՛, մեր տղա, գործի են լծել, հա՞:

Լսի՛ր, ես գնում եմ լողալու: Դու չե՞ս ուզում: Բայց չէ, դու գործ ունես: Պետք է աշխատես:

Թոմը մի պահ նայեց նրան և ասաց.

– Դու ի՞նչն ես աշխատանք համարում:

– Մի՞թե դա աշխատանք չէ:

Թոմը շարունակեց սպիտակեցնել և անփույթ* ասաց.

– Գուցե աշխատանք է, գուցե և ոչ: Ես միայն այն գիտեմ, որ դա Թոմ Սոյերի սրտին մոտ է:

– Էհ, վերջ տուր: Հո չե՞ս ուզում ասել, որ դա նույնիսկ քեզ դուր է գալիս:

Վրձինը շարունակեց շարժվել:

– Դուր գա՞լ: Իսկ ինչո՞ւ պիտի դուր չգա: Հո ամեն օր տղաներին չի հաջողվում ցանկապատ ներկել:

Դրանից հետո գործն այլ ընթացք ստացավ: Թոմը վրձինը թեթևակի հետ ու առաջ էր տանում, հետ գնում ու նայում արդյունքին, տեղ-տեղ վրձնի հարված էր տալիս և նորից քննադատաբար նայում: Բենը, որ հետևում էր նրա յուրաքանչյուր շարժմանը, գնալով ավելի էր հետաքրքրվում, ավելի հմայվում: Ի վերջո ասաց.

– Լսի՛ր, Թո՛մ, տուր մի քիչ էլ ես ներկեմ:

ԱՁՔԻ ԱՌԱՋ

վրչին ընթացք անփույթ ֆենադրապել

Հարցեր

1. Ո՞ր արարքների համար էր մորաքույր Փոլին պատժել Թոմին:
2. Ի՞նչ պատիժ էր մտածել մորաքույր Փոլին:
3. Ինչպե՞ս Թոմը համոզեց Բենին ներկել ցանկապատը:
4. Ըստ Բենի ու Թոմի՝ ե՞րբ են աշխատանքը հաճույքով անում:

Առաջադրանքներ

1 Հարցերին պատասխանում է Թոմը:

Տեքստից օգտվելով՝ ավարտե՛ք նախադասությունները՝ խոսելով Թոմի անունից:

1. Մորաքույր Փոլին ինձ հանձնարարել էր _____:
2. Ես տխրել էի, որովհետև _____:
3. Վրձինը թաթախեցի կրի մեջ և _____:
4. Որտեղից որտեղ հայտնվեց _____:
5. Ամենաշատը նրան չէի ուզում հանդիպել, որովհետև _____:
6. Ես ձևացրի, թե մեծ նկարիչ եմ և _____:
7. Ես համոզեցի Բենին, որ ցանկապատ ներկելը _____:
8. Ես այնպես արեցի, որ Բենն ինքը _____:

2 Օգտվելով տեքստից՝ տեղադրի՛ր պակասող կետադրական նշանը:

– Ախ, այդ դո՞ւ ես, Բե՛ն, չնկատեցի:
– Էհ, վերջ տուր:
– Հի, հի: Կոճղին ես կապված, հա՞:

3 Արտագրիր նախադասությունները և գրիր, թե որն ինչ է արտահայտում. ափսոսանք, զարմանք, վախ, ուրախություն, հիացմունք, դժգոհություն, զղջում:

Օրինակ: Ավա՛ղ, արդեն ոչինչ չես կարող փոխել: (Զղջում)

- Ջա՛ն, էքսկուրսիա ենք գնալու:
- Վա՛յ, ինչպե՞ս գլխի չէի ընկել:
- Ո՞ւխ, տատիկն իմ սիրած գաթան է թխել:
- Օ՞ֆ, ինչ ձանձրալի է առանց ընկերների:
- Օ՜, այդքան պիտի սպասե՞մ:
- Վո՛ւյ, ի՞նչ ես ասում:
- Է՛հ, սա էլ մի կյանք չի:
- Ավա՛ղ, արդեն ոչինչ չես կարող փոխել:

4 Ըստ նկարագրված իրավիճակների՝ կազմիր նախադասություններ՝ օգտագործելով համապատասխան ձայնարկություններ:

1. Ծննդյան օրը քո ուզած նվերն ես ստացել:
2. Ավագ եղբայրդ խոստացել է քեզ տանել սահադաշտ:
3. Պատահաբար տրորել ես ընկերոջդ ոտքը:
4. Շատ գրավոր աշխատանքներ ունես անելու:
5. Ընկել ես և վնասել ձեռքդ:

Օրինակ: Ջա՛ն, ծննդյանս օրը ես իմ ուզած նվերն ստացա:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Ջա՛ն, ես սովորեցի_____
Ո՞ւխ, ես կարողացա _____
Վա՛յ, ես դժվարացա _____

Այս դասին դու՝

- Կկազմես նախադասություններ՝ գործածելով ձայնարկություններ:
- Կիմանաս, թե ինչպես տղաները ներկեցին ցանկապատը:
- Կսովորես դժվարությունները հաղթահարել:
- Կեզրակացնես, որ չսիրած գործն էլ է հնարավոր դարձնել հաճելի զբաղմունք:

ՀՆԱՐԱՄՏՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԱՊԱՏԸ

(շարունակություն)

Եթե հնարամիտ ես, կյանքը հրաշալի կդառնա:

Թոմը մտածեց, ձևացրեց, թե համաձայնում է, բայց միտքը փոխեց:

– Ո՛չ, ո՛չ, Բե՛ն, չի՛ կարելի: Մորաքույր Փոլին շատ պահանջկոտ է հատկապես հենց այս ցանկապատի նկատմամբ, որովհետև փողոցի վրա է: Եթե հետևի կողմի ցանկապատը լիներ, ուրիշ բան, նա չէր մտածի: Այո՛, նա շատ պահանջկոտ է այս ցանկապատի նկատմամբ, շատ մեծ խնամքով պետք է ներկվի: Ես համոզված եմ, որ հազար, գուցե և երկու հազար տղայից մեկն էլ չկարողանա այնպես անել, ինչպես հարկն է:

– Մի՞թե, դե լավ, թույլ տուր գոնե փորձեմ: Մի՛ քիչ: Թո՛մ, եթե ես քո տեղը լինեի, թույլ կտայի:

– Բե՛ն, ես սիրով կթողնեի, ազնիվ խոսք, բայց մորաքույր Փոլին... Ջիմն ուզեց անել, բայց նա չթողեց: Չե՞ս տեսնում՝ ես ինչքան զգույշ եմ, իսկ եթե թողնեմ ու մի բան պատահի՞ ցանկապատին...

– Չէ՛, չէ՛, ես շատ զգույշ կլինեմ: Թո՛ւյլ տուր մի անգամ փորձեմ: Լսի՛ր, խնձորս քեզ կտամ:

– Դե լա՛վ, վերցրո՛ւ:

Թոմը վրձինը տվեց նրան դժգոհ արտահայտությամբ, բայց սրտում գոհ էր: Նա տակառի վրա նստած՝ ոտքերն էր օրորում, խնձորը ծամում և նոր անմեղների համար ծուղակ պատրաստում:

Ջոհերն անպակաս էին: Իրար հետևից տղաներ էին գալիս. նրանք մոտենում էին Թոմին ծաղրելու մտադրությամբ, բայց հետո խնդրում, որ ցանկապատը սպիտակեցնեն: Երբ Բենը հոգնեց, նրա փոխարեն, թղթի մի նոր օդապարուկի դիմաց, ներկելը շարունակեց Բելլի Ֆիշերը: Երբ սա էլ հոգնեց, Ջոնի Միլլերը Թոմից գնեց աշխատանքը, և այսպես շարունակվեց մի քանի ժամ:

Իսկ երբ կեսօրն անցավ, առավոտվա աղքատ Թոմը ուղղակի լողում էր հարստության մեջ:

Նկարիչը Թոմին պատկերել է այնպես, ինչպես դու տեսնում ես նկարում: Ինչպիսի՞ն է քո պատկերացրած Թոմը: Նկարագրի՛ր նրա արտաքինը:

Բացի վերոհիշյալ գանձերից, նա ուներ տասներկու մարմարե գնդիկ, կապույտ ապակու կտոր, որի միջով կարելի էր նայել, փայտե թնդանոթ, ոչ մի բան չբացող մի բանալի, մի կտոր կավիճ, ջրամանի ապակե խցան, մի զույգ շերեփուկ, պղնձե բռնակ, մի շան վզնոց՝ առանց շան, դանակի մի կոթ, նարնջի չոր կեղև ու լուսամուտի մի հին, կոտրած շրջանակ: Ոչինչ չանելով՝ Թոմը շատ լավ ժամանակ անցկացրեց, իսկ ցանկապատն արդեն ծածկվել էր երեք շերտ ներկով: Եթե ներկը չսպառվեր, նա քաղաքի բոլոր տղաներին կսնանկացներ:

Թոմը մտածեց, որ աշխարհը, ի վերջո, այնքան էլ դատարկ չէ: Նա, առանց իմանալու, հայտնաբերել էր մի մեծ օրենք՝ որպեսզի երեխան կամ մեծահասակը մի բանի ձգտի, անհրաժեշտ է պարզապես այնպես անել, որ նա դրան դժվարությամբ հասնի:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

որովհետև որպեսզի ի վերջո

Հարցեր

1. Ի՞նչը ստիպեց Բենին, որ նա սկսեց հաճույքով ներկել ցանկապատը:
2. Ինչպե՞ս էր փոխվում տղաների մտադրությունը Թոմի հետ շփվելիս: Ինչո՞ւ:
3. Ընկերներն ինչե՞ր առաջարկեցին Թոմին ցանկապատը ներկելու դիմաց:
4. Ո՞ր օրենքը հայտնաբերեց Թոմը:
5. Քո կարծիքով՝ ինչո՞ւ է պատմվածքը վերնագրված «Հնարամտության ցանկապատը»:

Առաջադրանքներ

1

Տեքստից օգտվելով՝ ավարտի՛ր նախադասությունները՝ խոսելով Թոմի անունից:

1. Վրձինը Բենին միանգամից չտվեցի, որ _____:
2. Մինչ Բենը ներկում էր ցանկապատը, ես _____:
3. Լողալու գնացող տղաները _____:
4. Ցանկապատը ներկելու համար տղաները _____:
5. Եթե ներկը չսպառվեր _____:
6. Ես, առանց իմանալու, հայտնաբերեցի մի օրենք՝ _____:

2

Թոմի արարքներից և ցանկապատը ներկելու պատմությունից ելնելով՝ բնութագրի՛ր Թոմին:

3

Գրի՛ր՝ ի՞նչ ես անում դու, երբ քեզ մեծահասակները որևէ գործ են հանձնարարում: Այդ մասին պատմի՛ր Թոմին:

4 Շարունակի՛ր լրացնել աղյուսակը:

Մարդու արարքները բնութագրում են նրան	
Արարք	Բնութագիր
Առանց քո խնդրանքի օգնեց քեզ, որ տեղափոխես իրերդ:	Ուրեմն նա պատրաստակամ է, օգնող է, ուշադիր է, նրբանկատ է:
Ընկերդ քեզ հյուրասիրեց իր քաղցրավենիքից:	Ուրեմն....
_____	Ուրեմն նա ճշմարտախոս է, ազնիվ է, արդարամիտ է:
_____	_____

5 Վա՜յ, վա՜խ ձայնարկություններն օգտագործի՛ր նախադասություններում այնպես, որ արտահայտեն տարբեր հույզեր:

Օրինակ:
– Վա՜յ, մայրի՛կ ջան, տե՛ս,
Բակն ու դուռը լի
Ինչքա՜ն սպիտակ
Թիթեռ է գալի...
(Հրճվանք):

– Վա՜յ, չկտրե՛ս, աստված սիրես,
Էս մինն ահա՝ տա՛ր քեզ ծառա:
(Վախ, սարսափ):

6 Պատմությունից դուրս գրիր մեկ պատմողական, մեկ հարցական և մեկ բացականչական նախադասություն:

– Բարև, Թոմ,– անսպասելի հայտնվելով Թոմի կողքին՝ ասաց Արան:

Թոմին մի պահ թվաց, թե իր ընկերներից մեկն է, որ այդպես ծիծաղելի հագնված հայտնվեց իր կողքին:

– Բարև, դու ո՞վ ես,– զարմացած հարցրեց Թոմը:

– Ես Արան եմ: Եկել եմ ապագայից: Դու որտեղի՞ց գիտես հայեր են,- իր հերթին զարմացավ Արան:

– Երբ իմ մասին գիրքը թարգմանեցին, ես արդեն սկսեցի խոսել:

– Իսկ դուք դպրոցում հայերեն չե՞ք սովորում:

– Չէ՛:

– Իսկ մենք մեր դպրոցներում անգլերեն անցնում ենք: Մեզ համար շատ գեղեցիկ դպրոցներ են կառուցում: Շատ բան ենք սովորում այնտեղ, շատ ընկերներ ենք ձեռք բերում, միջոցառումներ կազմակերպում, խաղեր խաղում, արշավներ գնում: Օրինակ՝ քեզ ես մեր դպրոցից գիտեմ՝ Մայրենիի դասագրքից:

– Ինչ լավ է, որ դուք այդպիսի դպրոցներ ունեք, ես էլ շատ կուզեի այդպիսի դպրոց գնալ:

– Արի գնանք մեզ մոտ:

– Չէ՛, ես դեռ ցանկապատը պիտի ներկեմ,– տխուր ասաց Թոմը:

ԴԱՍԻՑ ՔԱՂԱԾ ԻՄ ՊՏՈՒՂՆԵՐԸ

Մեծ լինի մարդ, թե երեխա,
Որ գործ անել նա ցանկանա՝
Պետք է դժվար հասնի գործին,
Հավատացեք Թոմի փորձին:

«ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ» ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այս դասին դու՝

- Կվերհիշես թեմատիկ շարքի ստեղծագործությունների հերոսներին:
- Կկազմես միասնական աշխատանք կատարելու մի տեքստ:
- Ընկերներիդ հետ կորոշես, թե որքան ծառ կարող եք փրկել:
- Կկարևորես կազմակերպված և համատեղ աշխատանքը:
- Հետաքրքրաշարժ հարցարանի միջոցով կստուգես ինքդ քեզ:

1 Կարդացեք և որոշեք՝ ո՞ր ստեղծագործության հերոսն է այս խոսքն ասում:

– Հե՛յ, ի՛մ թոռնիկներ, բարձրից բարձր ձեր երազանքն է աննահանջ ու արթուն:

– Օ՜յ, իմ խաղընկեր, իմացի՛ր, որտեղ կա սեր ու միություն, այնտեղ չի լինի երբեք պարտություն:

– Է՛յ, է՛յ, գնացեք , ինձ համար մի շիշ հյութ բերեք, խնդրում եմ:

– Ա՜խ, ես մեծ ուրախությամբ կգնայի, բայց ես ոչ մի կերպ չեմ կարող բացակայել:

– Վա՜յ, ի՜նչ ծուլորեն է ներկը քսում քթիս:

– Էհ, վերջ տուր, հո չեմ ուզում ասել, որ դա նույնիսկ քեզ դուր է գալիս:

– Դուր գալ: Իսկ ինչո՞ւ պիտի դուր չգա: Հո ամեն օր տղաներին չի հաջողվում ցանկապատ ներկել:

2 Պատմի՛ր՝ ինչ կլիներ, եթե «Հնարամտության ցանկապատը» պատմվածքում հայտնվեր Չիպոլինոն:

3 ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

Հարցեր	Պատասխաններ
	Մենք մինչև գործը սկսելը մի լավ մտածում ենք:
	Ընկերներով որոշում ենք, թե ով ինչ պետք է անի:
	Ձեռք ենք բերում անհրաժեշտ իրեր:
	Երբ դժվարանում ենք, դիմում ենք մեծերի օգնությանը:
	Միասին ներկայացնում ենք մեր համատեղ աշխատանքի արդյունքը:

4 Դերային խաղով ներկայացրե՛ք Չիպոլինոյի և Մաստինոյի զրույցը:

5 Նախադասությունները դասավորի՛ր այնպես, որ ստացվի տեքստ: Վերնագրի՛ր և համեմատի՛ր ընկերոջդ գրածի հետ:

• Այդ նպատակով չորրորդ դասարանի աշակերտները որոշեցին ընդարձակել դպրոցամերձ հողամասի կանաչ տարածքը:

• Ուսուցչուհին ցուցադրեց մի տեսանյութ, որտեղ դասն իրականացվում էր բացօթյա տարածքում:

• Աշակերտներն առաջարկեցին ընթերցանության դասերը կազմակերպել դպրոցի բակում:

• Նամակ գրեցին համայնքապետարանի համապատասխան բաժին և խնդրեցին աջակցել տնկիներով:

• Խորհրդակցեցին ուսուցիչների հետ, թե որ ծառերը լավ կաճեն իրենց տարածքում:

• Կերպարվեստի դասին նկարեցին իրենց պատկերացրած կանաչ տարածքը:

• Որոշեցին տնկիների և ծաղիկների դասավորությունը կանաչ տարածքում:

• Դիմեցին ծնողների և համայնքի բնակիչների օգնությանը:

• Սկսեցին կանաչապատման աշխատանքներ:

6

Դպրոցում հայտարարված է թղթի թափոնի հավաքման մրցույթ: Ձեր դասարանը որոշել է մասնակցել մրցույթին:

Հաղթող կճանաչվեք, եթե ձեր հավաքած թափոնները լինեն մաքուր և սեղմված:

Հետաքրքրվեք, թե որքան թղթե թափոն է անհրաժեշտ մեկ ծառ փրկելու համար:

Հաշվեք, թե որքան թուղթ եք հավաքել:

Ձեզ հաջողվեց փրկել մեկ ծառ: Եթե ոչ, ապա հաշվեք, թե քանի կիլոգրամ է ևս անհրաժեշտ մեկ ծառ փրկելու համար:

Որոշեք, թե ձեզնից յուրաքանչյուրն ինչ կարող է անել թուղթը խնայողաբար օգտագործելու համար:

7

Եթե ուզում ես իմանալ՝ համագործակցող ես, թե ոչ, քեզ կօգնի այս թեստը: Պատասխանիր հարցերին՝ նշում կատարելով «այո», «երբեմն» կամ «ոչ» սյունակներում:

ՈՐՔԱՆՈՎ ԵՍ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ

	Ինչպե՞ս եմ մասնակցում խմբային աշխատանքներին	Պատասխաններ		
		Այո	Երբեմն	Ոչ
1	Հաճույքով եմ ընդգրկվում խմբային աշխատանքներին:			
2	Ստանձնում եմ տարբեր դերեր:			
3	Հայտնում եմ իմ կարծիքը:			
4	Խոսում եմ ցածր ձայնով:			
5	Լսում և ընդունում եմ ընկերներիս կարծիքները:			
6	Համաձայնեցնում եմ իմ գործողությունները խմբի մյուս անդամների հետ:			
7	Ձևակերպում եմ դիպուկ հարցեր:			
8	Աջակցում և խրախուսում եմ խմբի անդամներին:			
9	Ուրախանում եմ թիմի հաջողություններով:			

«Այո» պատասխանի համար՝ 2 միավոր:
«Երբեմն» պատասխանի համար՝ 1 միավոր:
«Ոչ» պատասխանի համար՝ 0 միավոր:

Այժմ ժամանակն է, որ կիրառես քո մաթեմատիկական կարողությունները և հաշվես ունեցածդ միավորները:

Եթե ունես 14–18 միավոր, ուրեմն դու լավ համագործակցող ես:
Եթե ունես 9–13 միավոր, ուրեմն միշտ չէ, որ քեզ հաջողվում է համագործակցել, եղի՛ր ավելի ուշադիր և կհաջողես:
Եթե ունես 0–9 միավոր, ուրեմն պետք է շատ ջանք թափես և հաստատ արդյունքի կհասնես:

ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ

Պայմանանշանները քեզ կօգնեն ավելի արագ և հեշտ կողմնորոշվելու դասագրքի էջերում:

	Խմբային աշխատանք		Ունկնդրել
	Աշխատանք զույգերով		Պատմել
	Մուտքի պատուհան		Աչքի առաջ
	Ամփոփում		Գիտե՞ս, որ...
	Հարցեր		Ներառարկայական կապ
	Առաջադրանք		Միջառարկայական կապ
	Հետաքրքրաշարժ առաջադրանք		Նախագծային աշխատանք (հետազոտական)
«Դեպի վեր» առաջադրանք			Առած, ասացվածք
	Բարդ		
	Միջին բարդությամբ		Շուտասելուկ
	Պարզ		Հանելուկ
	Գրել		Նկարելուկ
	Սովորի՛ր հարցեր տալ		Փոխակերպում
	Հիշի՛ր, վերհիշի՛ր		QR կոդ՝ vachagan.am կայքի հղում

ՓՈՔՐԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Անապատ - ամայի, ոչ շեն տարածություն, ընդարձակ չորային տարածություն

Անհաս - որին չի կարելի հասնել, չհասնող, ոչ հասանելի, չհաս, անմատչելի

Անհետանալ – չքանալ, կորչել առանց հետք թողնելու, անհերևույթ լինել

Անձրևոց - անձրևից պաշտպանվելու միջոց

Աննահանջ – չնահանջող, նահանջի չդիմող, ուժեղ, հաղթական

Անցունակ – անցնելու ունակ՝ կարող: Այստեղ՝ 8-րդ հորիզոնականին հասնող

Անփույթ – փնթի, թափթփված, անխնամ

Արհամարհել – կարևորություն, նշանակություն չտալ, բանի տեղ չդնել

Բրդուճ - մի կտոր, պատառ հաց, լավաշ հացի կտոր, որի մեջ փաթաթած է ուտելիք

Բույր – հոտ, բուրմունք

Գալիք – ապագա, լինելիք

Երևակայական – անիրական, մտացածին

Զմրուխտ – վառ կանաչ գույն, թանկարժեք քար

Ընծա - նվեր, պարգև, ձոն

Ընտելանալ – վարժվել, մտերմանալ

Թովք – գրավչություն, հրապույր

Թև ու թիկունք – հովանավոր, պաշտպան

Խենթ – խելքը խաղերին տված, չարաճճի, ծուռ, գժուկ, խենթուկ

Խորհուրդ – խրատ, առաջարկ, հորդոր

Խսիր – ծղոտից, բույսերի կեղևից կամ դալար ոստերից հյուսած կարպետ

Կայան – կանգ առնելու տեղ, հանգրվան, օթևան, կայարան

Կատարյալ – անթերի, ընտիր

Կարկաչ – հոսող փոքր ջրի ձայն, խոխոջ

Համբավ – հռչակ, բարի անուն

Հարթ – ողորկ, շիտակ, կոկ, տափակ

Հեզանազ – հեզ, խոնարհ, նազանի

Հոժարություն – համաձայնություն

Հորձանք – հորդացած ջրերի արագ հոսք, բարձր ու մեծ ալիք, հեղեղ

Հույզ – հոգեկան ապրում, զգացմունք

Հուզիչ – հոգեկան ապրում, հուզմունք, զգացմունք առաջացնող

Հույս - ակնկալություն, սպասելիք

Հուսահատ – հույսը հատած, կորցրած

Ճայ – ագռավանման սև թռչուն

Մինուճար երեխա – ծնողների միակ զավակը

Մոլորակ – արեգակի շուրջը պտտվող և նրանից լույս ստացող երկնային մարմին

Ներդաշնակ – բարեհնչյուն, ախորժալուր, անուշաձայն, համաչափ

Նվաղել – սաստիկ թուլանալ

Նուրբ – բարակ, բարեկազմ, նրբաթել, վայելչակազմ, գեղեցկահասակ

Շառաչ - աղմկալից ձայն, դղրդոց, գոռոց, շաչյուն

Շնորհալի – շնորհներով, ձիրքերով առատորեն օժտված

Ողորմածիկ – լուսահոգի, բարեհիշատակ հանգուցյալ, մեռած, ողորմած հոգի

Չարաճճի - անհանգիստ, աշխույժ, կատակի համար չարություններ անող

Չեմպիոն – պաշտոնական մարզական մրցումների հաղթող

Պանդոկ - գինետուն, հյուրատուն, ճաշարան

Պատվավոր – պատիվ, հարգանք ունեցող

Ջանք - եռանդ, աշխատանքի համար անհրաժեշտ լարում, ճիգ

Սրինգ - եղեգից, փայտից պատրաստված երաժշտական փողավոր գործիք

Սևադեմ – սև դեմք ունեցող

Վաստակ – աշխատանքով ստեղծված արդյունք

Ուխտ անել – որևէ բան անպայման անելու խոստում, երդում տալ

Ուտեստ - այն ամենը, ինչ գործածվում է որպես մարդկանց ուտելիք, պարեն

Քարավան – ուղտերի շարք, որն անապատում մարդիկ ու բեռներ է փոխադրում

Օլիմպիական խաղեր - խոշորագույն միջազգային մարզական հանդիսավոր իրադարձություն, մրցություն, մրցաշար

ՈՐՈՇ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Էջ 6: Առ. 4: Օրինակ՝ հորեղբայր, հողամաս, մայրաքաղաք, մորաքույր, հացատուն: Առ.5: Երգող, երգարան, համերգ, քայլերգ, երգչախումբ, երգիչ, պարերգ:

Էջ 10: Առ. 3: Տողերով՝ կարապ, ոզնի, շուշան, տաղանդ: Սյունակներով՝ կոշտ, պինդ:

Էջ 11: Առ. 7: Երազի՛ր, բայց ձեռքերդ ծալած մի՛ նստիր:

Էջ 12: Առ. 9: Ձի՝ սմբակավոր, խոտակեր, ընտանի: Վագր՝ մսակեր, գիշատիչ, ճանկավոր:

Էջ 14: Առ. 3: Ինչքան էլ գիտուն լինես, չիմացածդ մի անգետից հարցրու:

Էջ 15: Առ. 5: Գիրք: Առ. 6: Օրինակ՝ ահ, այտ, այր, անութ, արյուն, արտ, թան, թաս, **թույն**, թուր, հայ, հանրույթ, հատ, հատույթ, **հարս**, հյութ, հյուս, հյուր, հույն, հուր, **նյութ**, սան, սանր, սար, սյուն, ստություն, **սրահ**, սուտ, սուր, տարթ, տհասություն, տուն: Առ. 8: Դասագիրք, խնդրագիրք, գրապահարան, գրադարակ:

Էջ 23: Առ. 2: Ծով, օվկիանոս: Առ. 3: Գետ – կետ – կեր – կոր – կով – ծով:

Էջ 29: Առ. 4: Հարյուրհազարավոր տղաները, հարյուրհազարավոր աղվեսները:

Էջ 32: Առ. 3: Զարաճճի, բրդուճ, անձրևոց, բարձունք, արհամարհել, խորհուրդ, սևադեմ:

Էջ 40: Առ. 3: Օրինակ՝ ահ, ավարտ, ավեր, արոտ, արտ, արահետ, արատ, արար, արհեստ, հավ, հավատ, հատ, հատոր, հարավ, հարս, հեր, հոտ, հոր, սար, սարվոր, սեր, սրահ, վար, վարս, տավար, տեր:

Էջ 47: Առ. 2: Դանդաղել, տխրել, քնել, իջնել:

Էջ 53: Առ. 2: Օրինակ: **բ.** Մարդու բերանում կա 32 ատամ: Կրակի բերանն ընկավ: Մկրատի բերանը պետք է սրել: **գ.** Պետք չէ գլուխ գովել: Սոխի գլուխն այս անգամ կարմիր էր: Սարի գլուխը ծածկված էր ձյունով:

Էջ 57: Առ. 4: Գլուխ:

Էջ 62: Առ. 5: Երազանք: Օրինակ՝ աներ, արանք, եզ, երազ, երան, զենք, նազ, քար, քնար, և այլն:

Էջ 63: Առ. 6: Օրինակ: Թռչունը ծալեց թևերը: Ինքնաթիռի թևերի վրա շարժիչներ կան: Մարդը երկու թևով գրկել էր ծառը: Դռան մի թևը բաց էր: Խաչի աջ թևը նախշազարդ էր:

Էջ 65: Առ. 2: Գյուղ կանգնի՝ գերան կկոտրի: Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք: Առ. 4: Ճե, արքա, մատ, զինվոր, թագուհի, նավակ: Ճատրակ:

Էջ 69: Առ. 6: 23-րդ վանդակում կլինի՝ 1689 կգ 600 գ:

Էջ 70: Առ. 9: Մի ձեռքը ծափ չի տա: Ձեռքը ձեռք կլվանա, երկու ձեռքը՝ երես: Մի խելքը լավ է, երկուսը՝ ավելի լավ: Մի ծաղկով գարուն չի լինի: 1+2+1+2+1= 7: Ցոթ անգամ չափի՛ր, մեկ անգամ կտրի՛ր:

Էջ 74: Առ. 3: Դդումը տխուր նստած էր մի կոճղի վրա: Դդումը նստած էր մի կոճղի վրա: Դդումը նստած էր կոճղի վրա: Դդումը նստած էր:

Էջ 79: Առ. 6: 1. Զամիչ: 2. Կիտրոն: 3. Պղպեղ: 4. Սոխ: 5. Բալ: 6. Լոբի: 7. Վարունգ: 8. Լոլիկ: Ընդգծված սյունակում կարդացվում է՝ Չիպոլինո:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ» թեմայի սկզբնանկար 3
Երգ բառերի մասին – Երվանդ Պետրոսյան 4
Գորգի տակ – Դոնալդ Բիսեթ 7
Հարստություն – Սիլվա Կապուտիկյան 13
Ճայը և սագը – Մխիթար Գոշ 17
Գետը – Համո Սահյան 22
Փոքրիկ Իշխանը – Անտուան դը Սենտ-Էքզյուպերի 25
«ՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ» թեմայի ամփոփում 31
«ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ» թեմայի սկզբնանկար 35
Անահիտ – Ղազարոս Աղայան 36
Պապիկը, որը չէր կարողանում հեքիաթ պատմել – Ջաննի Ռոդարի 45
Եղեգը, որը շատ էր ուզում դառնալ սրինգ – Ղուկաս Սիրունյան 50
«ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ» թեմայի ամփոփում 56
«ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ» թեմայի սկզբնանկար 59
Ամենաբարձրը – Երվանդ Պետրոսյան 60
Շախմատ – Ռաֆայել Հայրապետյան 64
Չիպոլինո – Ջաննի Ռոդարի 71
Չիպոլինո (շարունակություն) 75
Հնարամտության ցանկապատը – Մարկ Տվեն 81
Հնարամտության ցանկապատը (շարունակություն) 86
«ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ» թեմայի ամփոփում 92
Պայմանանշաններ 96
Փոքրիկ բառարան 97
Որոշ առաջադրանքների պատասխաններ 98

ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ԵԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՆՈՒՆԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ 4

Հանրակրթական դպրոցի դասագիրք

Մաս 1

Խմբագիրներ՝ Հրանտ Վարդանյան
Արտաշես Թադևոսյան
Սրբագրիչ՝ Նարինե Գևորգյան
Էջադրող՝ Սարգիս Միքայելյան
Ձևանմուշը՝ Վաչագան Ա. Սարգսյանի
Տեսանյութերի պատրաստումը՝ Սարգիս Աբրահամյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16:
Ծավալը՝ 6,25 տպ. մամուլ: